Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10141

297
Bo - 74

24 JUL 2013
10141
297
Ռ-74
380-94 f

№ 2491
№ 2184
№ 920
2491

ՄՈՀԱՄՄԷՏԸ

ԵՒ

ԻՍԼԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Ամենայն բանի ծնունդը մթին է, բայց առաւել մթին է կրօնների ծագումը։ Մարդու բնական ազդմունքից ծնած՝ կրօնները այլևս չեն յիշում իւրեանց մանկութիւնը, ինչպէս չափահաս մարդը չէ յիշում իւր առաջին հասակի անցքը և իւր մտքի օրէցօր աստիճան աստիճան աճումը. բոժոժների մէջ փակած թիթեռնիկների պէս, նոքա այնժամանակն են երևում, երբ որ կատարեալապէս հասունանում են և ընդունում իւրեանց ձևերը։ Կրօնի ծնունդը նման է մարդկութեան ծննդին։ Գիտութիւնը հաստատում է, թէ մի օր բնական օրէնքի արարչական զօրութեամբ երևեցաւ մտածող էակը ամենայն հոգեկան և մարմնական ձիրքերով զարդարած։ բայց կամիլ բացատրել մարդուս երևիլը երկրի վրայ բնութեան այժմեան օրէնքով, կնշանակէ այնպիսի դուռը բանալ այլանդակ երևակայութիւնների, որոց վրայ ոչ մի խոհական մարդ չի կամենայ երբէք դարձնել իւր մտադրութիւնը։ Ստոյգ է և այն, թէ մի օր մարդը իւր ընդունակութեան բնական և ազատ կարողութեամբը յանկարծ սկսել է խօսիլ, բայց ոչովի խելքը կարող չէ մեկնել մեզ այդ անսովոր և հրաշալի բանը, որ այժմ դառել է ամենեին անկարելի։ Նմանապէս պիտի հրաժարուինք կրօնների նախկին իրողութիւնները մեկնելուց մեր տեղեկութեանց հասարակ եղանակով, այն իրողութիւնները, որոնց համեմատ այլ ևս ոչինչ չկայ, այն ինչ մարդկային ազգը կորցրուց իւր կրօնական պաղարերութիւնը։

Բայց գիտութիւնը արդեօք պիտի հրաժարուի երկրագնդի կազմութիւնը բացատրելուց այն պատճառաւ, որ այն երևոյթները՝ որոնք բերել հասուցել են նրան մինչև այժմեան դրութիւնը, այլ ևս չեն երևում արարչագործութեան մեծ սանդուղքի վերայ, պիտի հրաժարուի արդեօք կեանքի և կենդանի տեսակների յայտնութիւնը բացատրելուց, ինչու որ ժամանակակից չրջանը դադարել է արարչագործելուց, պէտք չէ՞ բացատրել բարբառի ծնունդը, ինչու որ նա այլ ևս չէ ծնուում ու-

րիչ լեզուներից, կրոնների ծագումը, ինչու որ այլ ևս չեն յառաջ գալի նրանք կրոններից. ոչ երբէք։ Գիտութեան և կրիտիկի քաղցր պարտաւորութիւնն է գուշակել անցեալը ներկայի թոյլ հետքից։ Մտադիր քննութիւնը չէ հեռացուցել մեզ արարչական դարուց այնքան, մինչև որ անկարող լինինք երևակայել և ըմբռնել սկզբնական ինքնակամ ծնունդը։ Պատմութիւնը քանի որ ազատ լինի հեռաւոր դարերու համար, դարձեալ բոլորովին լուռ չէ մնում. նա թոյլ է տալի մեզ եթէ ոչ ուղղակի մերձենալ առաջարկութեանը, գոնէ ըմբռնել նրան արտաքուստ։ Ապա որովհետև ոչինչ չկայ բացարձակ մարդկային բաներում և չկան անցեալումը երկու իրողութիւնք, որոնք ճշգիւ միատանում լինին միևնոյն ստորոգութեան մէջ. վասնորոյ մենք ունինք միջանկեալ և մերձաւոր տոպճաններ, որով կարողանում ենք առաջի առնել այն երևոյթները, որոնք անմերձենալի են անընդմիջական ուսման համար։

Երկրաբանը գտնում է երկրագնդի յեղաշրջութեանց այժմեան աւերակների մէջ հանգամանքներ առաջին խառնութիւնները բացատրելու համար։ Լեզուագէտը՝ տեսնելով լեզուների օրէցօր աճումը, բացացատրում է նրանց կազմութեան կանոնները։ Պատմաբանը կրոնական երևոյթները հուշակող սկզբնական փաստերի պակասութեան տեղը կարող է յառաջ բերել մաշած և աւերուած աստուածաբանական խնդիրները, կիսակործան կրոնները, ցոյց տալով յայտնապէս, թէ և շատ համառօտ, այն եղանակները, որոնց միջոցով ձևացել են հին դարերի մեծամեծ գործերը։

Իսլամի ծագումը այս մասին մի հատ բան է և արդարև անգին, Մոհամեդականութիւնը էլաւ մարդկութեան կրօնական վերջին գործը և շատ մասնով ոչ այնչափ տարօրինակ։ Փոխանակ այն գաղտնիքին, որոյ մէջ ուրիշ կրոնները փաթաթում էին իրենց ծնունդը, սա ծնում է բաց, և նրա արմատներն են գետնի երեսին։ Նրա հիմնադրի կեանքը մեզ այնպէս յայտնի է, ինչպէս ԺԶ. դարու Բարեկարգողի կեանքը։ Մենք կարող ենք հետևել տարուց տարի նրա մտքի շարժմունքներին, նրա հակառաբանութիւններին և նրա տկարութիւններին։ Ուրիշ տեղ կրոնների սկիզբը կորչում է ցնորքի մէջ. շատ սրամիտ կրիտիկի աշխատասիրութիւնը հաղիւ թէ կարողանում է առասպելաբանութեան և վէպքի խաբեայ կերպարանքի տակից որոշել ճշմարիտը։ Բայց Մոհամմէդականութիւնը ծնած հաստուն մտածողութեան մէջ բացարձակապէս հեռի է գերբնական բաներից։ Մոհամմէդը, Օմարը

Ալին չեն ոչ մարգարէներ, ոչ երազատեսներ և ոչ հրաշագործներ։ Նորանցից ամէն մինն շատ լաւ գիտէ, ինչ որ անում է. ամէն մինը յանդգնաբար է լինում վերլուծութեան առջևը բոլորովին յայտնի և մարդկային իւր տկարութիւններով։

Վէյլ և Կոստան դը Պերսեվալ գիտնականների ընտիր աշխատասիրութեան շնորհքովը, կարելի է ասել հաստատ, թէ Իսլամի ծագման խնդիրը սահմանաբար այժմ հասել է մի կատարեալ և յայտնի վճռի։ Ամերիկան և Անգլիան նմանապէս շատ պարապել են Մոհամմէդի վրայ։ Վաշինգտոն Իրվինգ երևելի բոմանագիրը պատմեց նրա վարքը ընտիր և արժանապատիւ կերպով, բայց առանց քննադատ ծանօթութեանց, այնու ամենայնիւ նորա գիրքը այս մասին վկայում է մի ճշմարիտ յառաջադիմութիւն, երբ որ մտաբերում ենք, թէ 1829 թուականին Պ. Կարլ Ֆորստերը հրատարակելով երկու մեծատատոր գիրք, հոգևորականներին շատ հաւանական, պնդում էր թէ Մոհամմէդը ուրիշ բան չէր եթէ ոչ "այծի փոքր եղջիւրը, որ նկարագրած է Դանիէլի Ը. գլխումը, և թէ Պապն էր մեծ եղջիւրը"։

Պ. Ֆորստերը (*) հիմնում էր այս ճարտար բաղդատութեան վրայ իւր փիլիսոփայական եզրակացութիւնը. Պապը, ասում էր նա, ներկայացնում է արևմտեան քրիստոնէից մոլորութիւնը, այլ Մոհամմէդը արևելեան մոլորութիւնը, ուստի Մոհամմէդականութեան և Պապականութեան մէջ երևում են աղուս նմանութիւններ։

Կաղկասումը պաշտում էին երբեմն Մահոմ անունով ոսկեայ կուռք որ Շարլմանը չհամարձակեցաւ կործանել, վախենալով դեերի լեղուցից։ Իբր թէ սրանք նրա մէջ բնակում էին, մինչև որ վերջը խմացան թէ այն կուռքը ոչ այլ ինչ էր եթէ ոչ սուտ մարգարէ։ Միջին դարերի առաջին կիսի քրիստոնէից կուռական հաւատը շատ անորոշ տեղեկութիւն ունէր այլազգի կրոնների վրայ. Մաֆոմէդ Բաֆոմէդ Բաֆիմը երևակայում էր ինչպէս մի սուտ աստուած (*), ումը որ մարդկային զոհեր էին մատուցանում

Վրայ ԺԲ. դարումը միայն երևեցաւ Մոհամմէդը իբրև մարդարէ և այն ժամանակը յիրաւի սկսան մտածել նրա խաբէութեան քողը բացանելու

(*) Այս Ֆորստերը զուարճացրեց մի օր գիտական խուժանին մի զուարճալի այլաբանութեամբ սինայական արձանագրութիւնների վրայ, ուր գըտանում է նա առաջին լեզուն և գիրը, Եվից գրքի բնագիրը նայն։

(*) Ուստի Բաֆիմականութիւն, Մահոմականութիւն, Մոմականութիւն, սնոտապաշտ և անսուրբ կրոնները նշանակելու համար։

վրայ։ Շատ ուշ ԺԶ և ԺԷ դարերումն Բիբլիանդերը, Հօտոմնգերը, Մարակսին դեռևս չէին համարձակում այլ կերպիւ պարապիլ զուրանի վրայ, բայց եթէ միայն նրան հերքելու դիտաւորութեամբ։ Փրիդօնը, Բայլը և Վոլթերը թէպէտ վերջումը գրեցին Մոհամմէտի վրայ՝ իբրև պատմաբաններ և ոչ իբրև հակառաններ. բայց վաւերական փաստերի պակասութիւնը պահում էր նրանց այն երեխայական առասպելների քննութեան մէջ, որոնք մինչև այն ժամանակը զօրացնում էին ժողովրդի հեռաբրքրութիւնը և աստուածաբանների զայրոյթը։ Արեւելեան աղբիւրների վրայ հիմնուած Մոհամմէդի վարքի պատմութեան առաջին փորձի փառքն ու պատիւը պատկանում է Գանիլին։ Այս գիտունը իւր ուսումնասիրութեամբ աւելի յաջողակ համարեց իւր տեղեկութիւնները քաղել Աբուլֆեդից։ Բայց նա նոյնպէս քննութիւն չէ արել այն մեծ զանազանութեան վերայ, որ նկատուում է Աբարայոց պատմաբանների գրոց և պարսկական երևակայութիւնից ծնած վէպերի մէջ։

Այս գլխաւոր զանազանութիւնը, որ Գ. Կոսսէն դը Պերսեվալը ճշդիւ քննեց, ճշմարտապէս բաղկացնում է Մոհամմէտականութեան ծագմանը վերաբերեալ ամենայն խնդիրների հանգոյցը։ Մոհամմէտի վարքի պատմութիւնը չարադրուած Իբնիհիշամի և Ապուլֆեդի Աբարայոց պատմիչների համաձայն՝ պարզ է և բնական և գրեթէ առանց հրաշագործութիւնների. չարադրած Թուրք և Պարսիկ հեղինակներին համեմատ՝ նրա վիպասանութիւնը երևում է ինչպէս մի ուղղ առասպելների ծաղրական կուտակութիւն և շատ վատ ոճով։ Թէպէտ Մոհամմէտի բարք ու վարքի վերայ ասանդութիւնները սկսան ժողովել Հաբաշների ժամանակով ևս, բայց այն ժամանակի ժողովողները հաստատուում էին արդէն գրած այն աղբիւրների վրայ, որոնց հեղինակները համարուում էին մարդարէի ընկերների ժամանակակից։ Մոհամմէտի տան մօտ եղած մզկիթումը կար մի Նստարան, որ և բնակարան էին չինել իրանց համար անտուն ու անտեղ մարդիկը, ապրում էին նորա առատաձեռնութիւնից և ուտում էին շատ անգամ նորա հետ։ Այս մարդիկը, որոնք կոչուում էին Նստարանի Մարդիկ (Ահլ—ել—Սոֆա), Մոհամմէտի մանաւոր հանգամանքների վրայ մեծ տեղեկութիւն ունին, և նրանց յիշատակարանները կամ ցուցակները եղան անթիւ ասացուածների կամ հանդէսների աղբիւր։ Նոյն իսկ Մոհամմէտական հաւատը զարհուրեցաւ այս վկայութիւնների բազմութիւնից։ Բոկհարի անունով անխոնջ պատմաբանը հաւատացնում է, թէ 200,000 վկայութեան մէջից, որ ժողովել էր նա, միայն 7225 ը թուում էին նրան վաւերական։ Երբ-

պական կրիտիկան կարող էր արձակ համարձակ առաւել ևս իմաստ ընտրութիւն տնել։ Այնու ամենայնիւ պիտի խոստովանինք, թէ որ այս առաջին վիպասանութիւնները ներկայացնում են մեզ շատ տեղեկութիւններ Մոհամմէտի վարքի վրայ և զանազանուում են մի վճռական կերպով այն կեղծաւոր պատմութիւններից, որոնք ստեղծած են միայն կարդացողների հոգևոր օգտի համար։ Իսլամի սկզբնական պատմութեան ճշմարիտ յիշատակարանը — Ղուրանը մնում է դարձեալ բոլորովին անմարսելի և սա միայն հելիք էր առանց ուրիշ պատմութեան ծանօթացնել մեզ Մոհամմէդի հետ։

Ոչ մի գրականութեան մէջ չկայ այնպէս մեկ շարադրութիւն, որ փոքրը ի շատէ նմանութիւն ունենայ Ղուրանի հետ։ Ղուրանն է Մոհամմէդի քարոզների և նրա օրական պատուէրների ժողովածոյ գիրքը, առաջ բերելով ևս ժամանակը, տեղը և հանգամանքները, որոնք քարոզներ և հրամաններ տալու պատճառ են դառել։ Այմէն մի հատուածը գրուում էր մարգարէի անդիր քարոզելուց յետոյ կաշու, ոչխարի թիակների, ուղտի ոսկորի և արմաւենու տերևների վրայ և կամ պահուում էր գլխաւոր աշակերտների մտքումը, որոնք և կոչուում էին Ղուրանարարձ (տանող, բերող զուրանի)։ Աբուբեքր ամիրապետի ժամանակով միայն Վէհամի պատերազմից յետոյ, ուր որ կորան հին մահմէտականներից շատերը, մտածեցին կրկին ժողովել Ղուրանը երկու տախտակների մէջ։ Ի հարկէ որ այս հաւաքումը կատարուել է բարի մտքով։ Նրա հատուածները միմեանց շատ հակառակ են և կարգով չեն դրած մինը մինի մօտ. գլխումը դրած են շատ երկայն հատուածները իսկ վերջումը շատ կարճ սուրաթները, որոնք մի քանի տողից աւելի չունին։ Սկզբնական օրինակը պահ տուին Հավսային, Օմարի դստերը, որ է Մոհամմէդի կինը։ Ղուրանի երկրորդ քննութիւնը էլաւ Օթման ամիրապետի ժամանակով։ Զանազան գաւառների օրինակների մէջ մտած ուղղագրութեան և բարբառների մի քանի տարբերութիւնները պատճառելով, Օթմանը քերականներից մի ժողով կազմեց և պատուէր տուեց նրանց ուղղել Ղուրանի ոճը Մէկքայի բարբառի համեմատ. ապա հրամայեց ժողովել և այրել ամէն ուրիշ օրինակները, վիճաբանութիւնները կարճ կտրելու համար։ Ահա այսպէս հասաւ Ղուրանը մինչև մեր օրերը առանց երևելի փոփոխութեան։ Մի աշխատասիրութիւն, որն որ երկար ժամանակ միմիայն յիշողութեան էր ապաստան, կարող չէր անարատ մնալ սխալմունքներից։ Վանորոյ Վէյլը հաստատում է թէ Օթմանի կրիտիկական քննութիւնը չէղաւ անարատ քերա-

կանական, ինչպէս որ կամենում էին Արաբացիք. այլ թէ քաղաքականութիւնը մանակից էր այն քննութեանը, մանաւանդ Ալիի պահանջողութիւնը նուաճելու խորհրդով։ Բայց Ղուրանը ներկայանում է մեզ այնչափ սակաւ կարգաւորութեամբ, այնչափ կատարեալ սնկարդութեամբ, այնչափ հաւատի հակասութիւններով և ամէն մի հատուածը ունի մի այնպիսի առանձին կերպարան, որ այս գրքի վաւերականութեան ընդհանուր բնութեան վրայ ոչինչ երկբայութիւն չէ մնում։ Ահա այս պարզապէս ծնած օտարոտի կրօնի վրայ է, որ մենք կամենում ենք դարձուցանել մի բոլէ մտածող մարդկանց ղեկաւորութիւնը։

Կրիտիկան առ հասարակ պիտի խոստովանի, որ ոչ ինչ ստոյգ տեղեկութիւն չունի կրօնից հիմնողների բարք ու վարքի պատմութեան վրայ։ Վիպասանութիւնը բոլորովին վարագոյր է քաշում նրանց ճշմարիտ պատմութեան վրայ։ Այն գրքերը և ճառերը, որ ընծայուում են նրանց, ոչ այլ ինչ են առ հասարակ, եթէ ոչ նորագոյն շարադրութիւններ և ամենեին այն ծանօթիւնները չեն տալի մեզ նրանց վրայ, ինչ որ ունեցել են նրանց աշակերտները։ Նաև նրանց բնաւորութեան գեղեցկութիւնը չէ իրեանց սեփհականը, այլ պատկանում է բոլորովին մարդկային բնութեանը, որ չինել է իր պատկերի ենմանութեան պէս։ Փոխակերպուելով անդադար արարչական զօրութեամբ ամենատեղ թըրթուրը դառնում է ի վերջոյ ամենագեղեցիկ թիթեռն։

Բայց Մոհամմէդի մասին այդպէս չէ բանը։ Մոհամմէտը ճշմարտապէս է մի պատմական անձն. մենք չօրափում ենք նրան ամէն կողմից։ Նորա գիրքը համարեա թէ բառ առ բառ յառաջ է բերում նրա ասած քարոզները։ Նրա կեանքը մի հասարակ պատմութիւն է առանց հրաշքի և առանց չափազանցութեան։ Իրն — իշանը՝ ամէնից հին պատմաբանը և Աբուբեկրանը՝ նրա վարքի հմուտ պատմիչը երկուսն էլ, խմաստուն հեղինակներ են։ Նրա պատմութիւնը զարդած է ջերմեռանդութեամբ, բայց իրաւացի և պատշաճ եղանակով, այնպէս՝ ինչպէս որ գրում էին առաջ սրբոց վարքը։ Նաև ոմանց սրբոց վարքի վրայ չատ վիպասանութիւններ կարելի է յառաջ բերել, որոնք ամենի առատակլխատն են քան թէ Խպամի մարգարէի պատմութիւնը։

Մոհամմէդը չկամեցաւ հրաշագործ լինել. նա կամեցաւ միայն մարգարէ լինել առանց հրաշագործութեան։ Նա ասում էր միշտ, թէ նա մի մարդ է ինչպէս ամէն ուրիշ մարդիկ, մահկանացու՝ ինչպէս մի այլ անձն, մեղքի տէր և ամէն մարդու պէս կարօտ Աստուծոյ ողորմութեանը։ Իր մահից առաջ կամելով մաքրել իր խղճմտանքը ասում է աթոռի վրայ։ «Մոհամմէդականք՝ ասում է նա, եթէ ձեզանից մէկին թակել եմ, ահա իմ մէջքս, թող նա ևս թակէ ինձ. եթէ ես մէկին անիրաւութիւն եմ արել, թող հատուցանէ ինձ անիրաւութեան փոխարէնը. եթէ ես մէկից մի բան խլել եմ, նրան իշխանութիւն եմ տալիս բոլոր իմ կայքի վրայ։ Մի մարդ վեր կացաւ տեղից և յայտնեց երեք դերհիմի պարտք։ Լաւ է, ասաց մարգարէն, ամօթը այս աշխարհումը քան թէ այն, և իսկոյն հատոյց իւր պարտքը։ Այս մեծ կանոնը, այս բարի և աղնիւ ճաշակը, որով Մոհամմէդը հասկացաւ իւր մարգարէական պաշտօնը, առել էր նա իւր ազգի հոգու յատութիւններից։ Չկայ ոչինչ այնպէս անստոյգ քան զկարծելը, թէ Արաբացիք մոհամմէդականութենից առաջ, եղած լինին մի բիրտ, տգէտ և մնապաշտ ազգ. այլ ընդ հակառակն առաւել պէտք է համարել նրանց խորամանկ, Սկիպտիկեան և անհաւատ։

Ահա այս տեղ մէջ ենք բերում Մոհամմէդի առաջին օրերի քարոզութեան մի մասն, արժանին հետազօտութեան, որ լաւ հասկացնում է մեզ այն սառն կասկածանքը, որ գտաւ նա իւր ազգիցը և այն մեծ զգուշութիւնը, որ պահպանեց նրան հրաշքներ գործելուց։ Մոհամմէտը նստած էր Քեաբի սրահումը, փոքր ինչ հեռի հաւաքուած էին չատ Կորեյշեան առաջնորդներ, որոնք և ամենեին հակառակ էին նորա վարդապետութեանը։ Նրանցից մինը Օրբա՝ Ռաբիայ որդին մօտ է գնում, նստում է Նորա մօտ և ուրիշների կողմից խօսելով Նորա հետ, ասում է. «Իմ բարեկամի որդի, դու մի մարդ ես խելքով ու ազգով գերազանց. թէպէտ դու խռովութիւն ես ձգում քոյ հայրենիքումը և բաժանումն գերդաստանների մէջ. թէպէտ դու անարգում ես մեր աստուածները, չարախօսում ես մեր պապերի և խմաստունների վերայ, համքաւելով նրանց ընկղմած անօրէնութեան և մոլորութեան մէջ. բայց մենք կամենում ենք քեզ հետ զգուշութեամբ վարուիլ։ Լսիր իմ առաջարկութիւնները, որ կամենում առնել քեզ և մտածէ, զուցէ նրանցից մի քանիսը ընդունելի կլինին քեզ։ — Խօսիր, ասաց Մոհամմէտը, ես ականջ եմ դնում քեզ։ — Իմ բարեկամի որդի, սկսաւ Օրբան, եթէ քո արարմունքի նպատակն այն է, որ հարստութիւն ճարես, մենք ամէնքս մեր բաժինը կտանք և քեզ համար այնչափ երևելի հարստութիւն կշինենք, որ Կորեյշեաններից ոչով չունենայ։ Եթէ դու փառք ու պատիւ ես ուզում, մենք կշինենք քեզ մեր թագաւոր դրուս և ոչինչ բան չենք վճռել առանց քո կամքի։ Եթէ չար հոգին, որ քեզ երևում է, այնպէս կպել է քեզ և իշխում է քեզ վերայ, որ դու չես կարողանում նրա զօրութենից պահել քեզ, բերել կտանք հը-

բայ։

մուտ բժիշկներ , որ քեզ փրկեն ու աղատեն դեի ձեռից ։—Ես ոչ ա-
գահ եմ և ոչ փառասէր և ոչ դև կայ իմ մէջը , պատասխանեց Մո-
համմէտը ։ Ես ուղարկած եմ Ալլահից , որ յայտնեց ինձ մի գիրք և
հրամայեց ինձ ծանուցանել ձեզ այն վարձն ու պատիժը , որ այն կեան-
քումը սպասումն ձեզ ։— Ո՛հ , Մոհամմէտ , ասացին նրան Կորէյշեանք ,
որովհետև դու չես ընդունում մեր առաջարկութիւնները և կենում ու
մնում ես հաստատ քո կարծիքի մէջ , թէ դու Ալլահի առաքեալ ես ,
ապա տուր մեզ քո ճշմարտութեան մասին յայտնի վկայութիւններ ։
Մեր դաշտը նեղ է և անպտուղ , խնդրիր քո Աստծուց , որ լայնա-
ցընէ և պտղաբեր առնէ . թող հեռացնէ նա մէկզմէկից սարերի այն
շղթայքը , որոնք դաշտը սեղմում են , թող վազեցնէ դեպի Ասորեստանի
և Իրակի գետերի նման , և կամ թող յարուցանէ գերեզմանից մեր նախ-
նիքներից մի քանիսին և նրանց միջից Կիլաբի որդի Կոսսային , այն
մարդուն , որոյ խօսքը այնքան զօրութիւն ունէր ժողովրդի մէջ .
թող այս վեմափայլ յարուցեալ մեռելները ճանաչեն քեզ մարգարէ ,
և մենք ևս կճանաչենք ։—Աստուած , պատասխան տուեց Մոհամմէ-
տը , այդ բանի համար չէ ուղարկել ինձ ձեզ մօտ . Նա առաքել է ինձ
միայն իւր օրէնքը քարոզելու ։—Գոնէ , ասացին Կորէյշեանք , խնդրէ՛
քո տիրոջից , որ հրամայէ իւր հրեշտակներից մէկին երկիր մեզ քոյ
ճշմարտութիւնը վկայելու և մեզ հրամայելու համար , որ քեզ հաւա-
տանք ։ Խնդրէ՛ ևս նրանից յայտնապէս ցուցանել մեզ , թէ նա յատուկ
քեզ ընտրել է ։ Թող նա աղատէ քեզ , որ հարկաւորութիւն չունենաս
սրոնել քո օրական հացը փողոցներումը ինչպէս մէկ ստոր անձն քոյ
հայրենակիցների մէջ ։—Ո՛չ , ասաց Մոհամմէտը . ես չեմ առաջարկել
Նրան այդ խնդրուածները , իմ պարտաւորութիւնն է միայն քարոզել
ձեզ ։ Ապա եթէ այդպէս է , թող քո տէրդ կործանէ մեր վրայ երկին-
քը , ինչպէս դու հաւատացնում ես , թէ կարող է նա այդ առնել ,
եթէ մենք չհաւատանք քեզ ։

Սրանից երևում է որ մի Բուդհա , կամ մի Աստուածորդի և կամ մի
երևելի հրաշագործ բարձր էին քան թէ այս ազգի բնաւորութիւնը ։ Ար-
աբացւոց նրբամտութիւնը նրանց ազատ և անկեղծ կենցաղավարութիւնը և
բարքի և հաւատի աղատութիւնը , որ տիրապետում էր Իսլամի ժամանա-
կումը , արգելք էին լինում նոր մարգարէին մեծամեծ հրաշքներ առնելու ։
Արաբիան ամենևին չունի նիւթ այլաբանութեան և առասպելաբանու-
թեան համար ։ Սէմեական ազգերը չհասկացան երբէք Աստուածոց
զանազանութիւն , բազմութիւն և սեռ ։ Աստուածուհի բառը Երբայե-

լէն կհամարուէր մի զարհուրելի բարբարոսութիւն ։ Այս է ահա այն
նշանաւոր գործի պատճառը , որ նրանք չեն ունեցել երբէք ոչ դիցա-
բանութիւն և ոչ դիցաշնական բանաստեղծութիւն։ Ցստակ և պարզ ե-
զանակը , որով նրանք ճանաչում են Աստծուն ամենևին աշխարհից չը-
ջոկուած՝ ոչ ծնող և ոչ ծնուած և ոչ ունող իւր նմանը ,դուրս էր ձգել այն
մեծամեծ զարդերը , այն բազմաստուած բանաստեղծութիւնները , ո-
րոնց մէջ Հնդկաստանը , Պարսկաստանը և Յունաստանը փաթաթել
են իւրեանց միտքը և որոնք կարող էին ծնիլ միայն այն ազգերի ե-
րևակայութեան մէջ , որոնք ունին ընդունակութիւն ընդարձակել Ա-
ստուծոյ , մարդկութեան և սիրելոց սահմանները ։

Եթէ դիցաբանութիւն ասելով իմանում ենք բազմաստուածութիւն ,
ուրեմն բազմաստուածութենից առաւել հեռացած միտքն անչուշտ Սէ-
մեական միտքն է ։ Արարիան գոնէ կորուսել էր , կամ ամենևին չէր ու-
նեցել գերբնական դիւտի ձիրքը ։ Հապա թէ կարելի է դատել ամենայն
Մօալլաքաթների (*) և Արաբացւոց հին բանաստեղծութեան ցուցակի մէջ
մի կրօնական խմաստ ։ Այս ազգը ոչինչ զղայութիւն չունէր սուրբ ասած
բանի վրայ . բայց սորա փոխարէն նա շատ կենդանի զգումէր այն
ամէնը , ինչ որ պատկանում էր ներդործականութեան և մարդկութեան ։

Ահա պատճառը , թէ ինչու է Մոհամմէտական վիպասանութիւնը
մնացել այնչափ աղքատ Պարսկաստանից դուրս , և թէ ինչու նորա ա-
ռասպելական սկզբունքները բոլորովին ոչինչ են ։ Մոհամմէտի կեան-
քը ինչպէս և ամենայն մեծ հիմնադիրներինը անկերկայ շրջապատած է
առասպելներով . բայց այս առասպելները դառել են իւր օրինադրու-
թիւն միմիայն Շէյհեանց մօտ , որոնց վրայ տիրապետում է պարսկա-
կան երևակայութիւնը ։ Շատ հեռի լինելով Իսլամի հիմն դառնալուց ,
այդ առասպելները ոչ այլ ինչ են , եթէ ոչ յաւելուածոյ հնացորդներ ,
առաւել տանելի քան թէ ոճնելի և համարեա թէ այնպէս՝ ինչպէս այն
անհաւասի գրքերի ստորին առասպելաբանութիւնը , որ եկեղեցին չընդ-
ունեց երբէք , թէ և չունէր հարկաւորութիւն ցոյց տալու այս մասին իւր
խստութիւնը ։ Ինչպէս , հասարակաց երևակայութիւնը չէ՞ շրջապատել
հրաշքներով այսպիսի անսովոր գոյութիւնը . ինչպէս , միթէ Մարգարէի
կեանքը մանաւանդ մանկութիւնը , այս օգտակար աղբիւրը կեղծեալ

(*) Մօալլաքաթ կամ կախուած ոտանաւորներ կոչում էին այն հատ-
ուածները , որոնք բանաստեղծական հանդիսի մէջ վարձատրութիւն էին ը-
ստանում և մեխած էին ոսկեայ մեխերով Քաբայի դռան վրայ ։

պատմութիւնների համար չէ նիւթ դառել վիպասաններին։ Գիրքահան պատմարանները ձեզ կասեն. զորօրինակ, թէ այն դիշերը երբոր ծնաւ Մոհամմէտը, Խոսրովի պալատը տարուբերուեցաւ դեռնաշարժութենից, մոգերի սրբազան կրակը հանգաւ, Սավի լիճը ցամաքեցաւ, Տիգրիսը դուրս եկաւ իւր ափներից և աշխարհի ամենայն կուռքերը ընկան երեսնիքս ի վայր։ Բայց և այնպէս այս սոսկը չէ հասնում ամենեին մինչև գիրքական և սրբազան վիպասանութեան աստիճանը, և մեկ խօսքով Մոհամմէդի երախայութեան վրայի զրոյցները բացի մի քանի արատներից դեղեցիկ են և բնական։ Այս պարզեցողութիւնը լաւ ըմբռնելու համար մենք մէջ կբերենք այս տեղ մի օրինակ, թէ Հընդկաստանը ինչպէս է ծնում իւր Հերոսների ծնունդը։

Երբոր արարածները տեղեկանում են, թէ Բուդհան ծնում է, Հիմալայի ամենայն թռչունները վազում են Քափիլայի պալատը և նստում են խօսելով և թեները փրփրացնելով թերրասների, պալիստրադների, կամարների, դահլիճների և տանիքների վրայ. լճերը ծածկուում են Լոթոսներով. իշ, ձէթ, մեղր, շաքար երևում են ամենայն օր առատութեամբ. թիրուվները, սրնդները, քնարները և ամենայն տեսակ նուագարանները հնչում են ինքնիրանց քաղցրանուագ ձայներ առանց երաժիշտների։ Աստուածները և ճգնաւորները վազում են առաջ՝ Բուդհին առաջնորդելու համար։ Բուդհան վեր է գալիս հարիւր միլիոն աստուածներով ուղեւորուած. նրա վեր գալու բոպէին հազարաւոր դաւառներ վառուում են հրաշալի լուսով, որ նսեմացնում է աստուածների լոյսը։ Ո՛չ մի արարած չէ զգում ահ ու դող. ամենայն արարած զգում է անվախճան բարօրութիւն և ունենում է միայն զորովական և քնքուշ մտածմունքներ։ Հարիւր միլիոն աստուածներ ձեռներով, ուսերով և գլխով պահում են և սանում են Բուդհի կուռքը։ Հարիւր հազար երգողներ և երաժիշտներ առաջ ու ետ և աջ ու ձախ երգում են Բուդհի գովասանքները։ Այն բոպէումը, որ նա դուրս է գալիս իւր մօր արգանդից, ամէն ծաղկները բաց են անում իւրանց կոկոնը, մատաղ ծառերը բարձրանում են դեռնից և բաց անում իւրանց ծաղիկները. անուշահոտ ջրերը վազում են ամէն կողմից։ Հիմալայի կողմից մատաղ առիւծները վազում են ուրախ ուրախ դէպի Քափիլա քաղաքը և գոնեերումը կանգնում, ոչովին ձեռաս չտալով։ Հինգ հարիւր ճերմակ մատաղ փղեր իւրանց կնճիթներով լիզում են թագաւորի Բուդհի հօրոտները. աստուածների երեխայքը մէջքը կամարներով զարդարած երևում են կանանց դաստակը դէս ու դէն մանղալով. կնանիքը գրեթէ

մերկանդամ երևում են պար գալով օդումը. աստուածների տասը հազար կոյս աղջկերք Աբրամարգի պուչից հովահարները ձեռներին, երևում են երկնքումը կանգնած. մեռելների մախրով լիքը հազարաւոր սափորները երևում են շուռ գալով Քափիլայ մայրաքաղաքի չորս կողմովը. աստուածների հարիւր հազար աղջկերք խեցուց չինած դարարափողները, թմբուկները վզերից կախած, երևում են կանգնած անշարժ. ամենայն հողմերը դադարեցնում են իրանց շուռցը. ամենայն գետերը և աղբիւրները կանգնում են. արեգակը, լուսինը, աստղերը դադարեցնում են իրեանց շրջանը։ Մի լոյս հարիւր հազար գոյներով հոգու և մարմնու մէջ երջանկութիւն պատճառելով, տարածուում է ամենայն տեղից։ Կրակը այլ ևս չէ այրում։ Դահլիճների, պալատների, թերրասների, կամարների գոնները երևում են մարգարիտներով և թանկագին քարերով շարած։ Աղուռները, անդրները, գայլերը, չղջիկները լռեցնում են իւրեանց ձայները, ամենայն տեղ լսուում է միայն քաղցր և ախորժ ձայն։ Անտառների բոլոր աստուածները իւրեանց մարմինների կէսը դուրս բերելով տերևների միջից, երևում են անշարժ և կորացած։ Սեծ և փոքր հովանոցներ բացուում են ամենայն կողմից օդի մէջ։ Թագուհին այնուհետև առաջ է գալի Լումբինեան այգումը. մի ծառ ցածրանում է և գլուխ է տալի նրան. Թագուհին շօշափում է մի ճիւղ նըրանից և մտիկ տալով դէպի երկինքը չնորհակալութեամբ, մի լաւ յորանջում է և մնում է անշարժ։ Բուդհան աստիկ չսասլով անց է կենում նորա աջու կողմից, ոչինչ վնաս չտալով նրան. մի սպիտակ Լոթոս դուրս է գալի գետնից և բացուում է նորան ընդունելու համար. մի հովանոց վայր է գալի երկնքից նրան ծածկելու և տաք ու ցուրտ ջրերի գետերը վազում են նրան լուանալու համար, և այլն։

Արաբիան ևս հասել էր արդէն այն աստիճանի խմացական նրբութեան, որ կարող էր յօրինել մի այս տեսակ գիրքական վիպասանութիւն։ Մի անգամ երբ որ Մոհամմէտը կամեցաւ նմանող լինել ուրիշ կրօնների գերազանց երևակայութեան, իւր դիշերային ճանապարհորդութեան մէջ դէպի Երուսաղէմ մի երևակայական անասունի վրայ բանը չրջեցաւ շատ վատ կողմը. այս պատմութիւնը մեծ ծաղրածութեան առիթ դառաւ, իւր աշակերտներից շատերը ուրացան նրան և մարգարէն շատից ուզել իւր անյաջող իդէայն, հրատարակելով, թէ այս հրաշալի ճանապարհորդութիւնը, որ առաջ պատմել էր նա իւրեն ճշմարիտ բան, միմիայն երազ էր։ Արաբացոց վէպքերը Մոհամմէտի վրայ Ալ-ալ-Դինի պատմութեանները բաւականանում են մի քա-

նվ զրոյցներով չատ զգուշութեամբ հնարուած ։ Զանք են անում հաւատարեցուցանել նրան իւր ժամանակակից և նախընթաց ազգերի նըշանաւոր մարդկանց հետ . նորա առաքելութիւնը գուշակել են տալիս յարգելի անձնաւորների բերանով ։ Երբ որ նա մանէր գալիս Մէկքի մերձաւոր անապատներումը , իւր մտածմունքներով զբաղուած , լսում էր ձայներ , որոնք ասում էին նրան . "ողջոյն առաքեալ Աստուծոյ ։ ,, Երբ որ յետ էր մտիկ տալիս , տեսնում էր միայն ծառեր և ապառաժներ։ Մէկքից վախչելու ժամանակը մտաւ մի քարայրի մէջ ։ Երբ նորա թշնամիքը գնացին այնտեղ նորան բռնելու , տեսան , որ մի բունի մէջ աղաւնեակը ձուաներ է ածել և սարդի ոստայնը իւր ցանցով կապել է ճանապարհը ։ Նորա ուղտը լի էր ազդեցութեամբ և երբ որ ցեղերի առաջնորդները ուզում էին բռնել նրա սանձը կերակուր տալու համար , Մոհամմէտը ասում էր" թողէք նրան մանգալ իւր համար , Աստուծոյ ձեռն է նրան առաջնորդում ,, ։ Նորա սուրը ևս մի քանի հրաշքներ է գործում Մի պատերազմի վերջումը , նստած էր նա միայնակ մի ծառի տակը , ծնգների վերայ բռնած իւր արծաթեայ կոթանի թուրը ։ Բէդուիններից մինը տեսաւ նորան , զարտուղի ճանապարհով մօտ գնաց և կեղծաւորուելով՝ իբր թէ լոկ հետաքրքրութեան պատճառով է եկել նորա կուշտը , ասաց նորան . թող մի տեսնեմ թուրդ ։ Մոհամմէտը անկասկած տալիս է նորան իւր թուրը . արաբացին առնում է , հանում է ընից և ուզում է խփել , բայց թուրը չէ հնազանդուում Բէդուինին ։ Նորա կեանքի հրաշքները նոյնպէս պարզ են . ինքը ոչինչ նորահրաշ բաներ չէր կարողանում հնարել ։ Նորա հրաշքների ծախսը թաղիքը քաշում էր Գաբրիէլ հրեշտակը , երևում է որ ուրիշ հնար չէ խմացել։ Բէդդիի կռիւը տալիս է մեզ հրաշալի բաների մի քանի օրինակներ, յանկարծակի տեղն ու տեղը հնարած ։ Հրեշտակների լեգեոնը կռիւ է տալիս Մոհամմէտականների համար ։ Մի Արաբացի նստած լինելով մերձակայ սարի վերայ , տեսնում է որ մի ամպ է մօտանում նորան և այն ամպի միջից լսում է ձիաների խխնջիններ և մի ձայն , որ ասում է ։ "Յառաջ գնա , Հայզումա ,, . (հրեշտակի ձիու անունը) ։ Մի Մոհամմէտական պատմում է , թէ մի Մէքկացի քաղաքից վազելով թուրը ձեռին , տեսաւ որ փախստականի գլուխը գլորուեցաւ հողի վերայ , թուրը չդիպած ։ Սորանից վճռեց նա , թէ մի երկնային առաքելի ձեռը առաջեց քան թէ իւրը ։ Մի քանիքը հաստատում են , թէ յայտնի տեսել են հրեշտակներին իբրեանց ձերմակ չալմերով , որոնց մի ծայրը ծածանում էր նոցա ուսերի վերայ , մինչ Գաբրիէլը նորանց առաջնոր-

դը փաթաթած ունէր ճակատին մի դեղին չալմայ . ով որ դիտէ Արաբացւոց կրքի չարժման վիճակը կռուի ժամանակը և կմտածէ թէ այսօրուան օրը էլաՄոհամմէտական էնթուզիասմի առաջին յարձակումը նա երբէք չի զարմանայ , թէ այս զրոյցները հաւատ են գտել . առաւել , զարմանալին այն է , որ Բեդրի պատերազմողների ուղեղը ըստեղծելէ միայն այսպիսի չափաւոր հրաշքներ ։

Շատ ժամանակից յետոյ և Պարսից բնութեան ազդեցութեան տակ , որ այնքան ալմատարար հակառակ է Արաբացւոց բնութեան ,Մոհամմէտի պատմութեան մէջ խառնեցին հրաշալի հանգամանքներ , որոնք չատ մօտացնում են նրան վերին Ասիոյ առասպելական վիպասանութիւններին ։ Թէպէտ Պարսկաստանը Իսլամի տակը մտաւ , բայց չըխոնարհեցաւ բնաւ Սեմետեան ազդեցութեան լծին ։ Փոխանակ լեզուի և կրօնի , որոնք եղան նրա վրայ հարկի պէս , նա կարողացաւ պահել իւր Հնդկա — Եւրոպական ազգային իրաւունքները , ստեղծելով իւր համար փիլիսոփայութիւն , դիւցազնական բանաստեղծութիւն և դիւցաբանութիւն ։ Բայց արա Հիսթ-ուլ-Ղուլուբը , Շիյեանց աւանդութիւնների հաւաքածոյ գիրքը , այն տեղ կտեսնես , որ այն դիւցը , երբ որ ծնաւ մարգարէն , եօթանասուն հազար մարգարտեայ պալատներ չինուեցան դրախտումը , որոնք կոչուեցան ծննդեան պալատներ ։ Նա ծնաւ թլպատեալ արդէն . սիրուն սիրուն տատերը չկանչուած եկել կանգնած են պատրաստ ։ Մի լոյս , որոյ ճառագայթը փայլեցաւ բոլոր Արաբատանի մէջ , ծագում է նորա հետ իմիասին նորա մօր արգանդից ։ Ծնաւ թէ չէ , իսկոյն ընկաւ ծնկան վրայ , բարձրացրուց իւր աչքերը դէպի երկինք և աղաղակեց . "Աստուած է միայն Աստուածը , և ես նորա մարգարէն ,, ։ Աստուած զգեստաւորում է իւր առաքելը աստուածահաճոյ չափով , սուրբ զգեստով և կապում է նրա մէջքին աստուածային սիրոյ գոտին ։ Հաղնում է ահեղ ջերմեռանդութեամբ հողաթափները , դնում է գլխին Նախագահութեան թագը և առնում է ձեռին կրօնական իշխանութեան գաւազանը ։ Երեք տարեկան ժամանակը , երկու հրեշտակներ բաց են անում նորա կողքը , խլում են նրանից սիրտը , հանում են միջից մեղաց սև կաթիլները և մէջը դընում են մարգարէական լոյսը ։ Մոհամմէտը տեսնում էր յետուստ նոյնպէս որդէս յառաջոյ . նորա թուքը քաղցրացնում էր ծովի ջուրը , նորա քրտունքի կաթիլները մարգարիտներ էին . նորա մարմինը չուաք չէր ձգում ոչ արեգակումը , ոչ լուսնի լուսումը . ոչինչ որդն չէր մօտանում նրան ։ Արաբացիքը ոչինչ չեն աւանդում այսպիսի անճոռնի

ոմով։ Այս ծաղրական ցնորամտութիւնը ամենևին չեն ՀԱՍՍՈՒՄ Ա-
րաբացւոց առաջին վիպասանութեան մաքրութեանը, ինչպէս անկանոն
աւետարանների ճանճրալի մեկնութիւնները ոչինչ ՀԱՍՍ չեն տալիս ան
սիաղների անմման վեհմութեանը։

Իսլամի ծագման վիպասանական նիւթերը մնացին միշտ այսպէս
տեղական աւանդութեան վիճակումը և առանց ստուգութեան հեղինա-
կութեան։ Փոխանակ այն հրաշալի էակին, որ միջնորդ է դառնում
երկնքի և երկրի մէջ, անհայր և անեղբայր աշխարհիս երեսին, մենք
տեսնում ենք Մոհամմէտը իբրև մի արաբացի իւր ազգի բնաւորութեան
ամենայն պակասութիւններով ապականուած։ Փոխանակ այն վիրին
անհասանելի ստուգածային անաչառութեան. «Կին դու, դի կայ իմ
և քոյ. Դա է իմ մայր և եղբայր և քոյր, որ առնիցէ զկամս աստու-
ծոյ»,, մենք տեսնում ենք այստեղ նորա վրայ մարդու ամէն սիրե-
կան ակարութիւնները։

Ավիթաի պատերազմումը, մի գերի կին. երբ Իսլամները տանում
էին ամարդութեամբ, ձայն տուեց. «խնայեցէք ինձ. ձեր առաջնորդի
մերձաւոր ազգականն եմ»։ Ցարան նրան Մոհամմէտի մօտ։ Աստուծոյ
մարգարէ, ասաց նա. ես և դու մի կթենով ենք մեծացել. ես քո քոյր Շահիմանն եմ, քո ծծմոր Հալիմի աղջիկը, Բէնու Ղասի
ցեղից։ Ի՞նչ ապացոյց ունիս դրա համար, հարցուց Մոհամմէդը։
—Մի խածուած ուսիս վրայ, որ դու կծեցիր ինձ մի օր, երբ որ ես
տանում էի քեզ մէջքիս վրայ, և ցոյց տուեց կծած տեղը։ Այս
տեսութիւնը միաքը բերելով Մոհամմէդին իւր առաջին մանկութեան յի-
շատակը և այն խնամքը, որ ստացել էր նա Բէդուինների մի ազքատ
գերդաստանի մէջ, շարժեց նրա զութը։ Մի քանի կաթ արտասուք
թացրին նրա աչքերը։—Այո՛, դու իմ քոյրն ես, ասաց նա Շայ-
մին և հանելով իւր վերարկուն սփռեց նրա տակը և նստացրուց նրան։
Ապա ասաց, եթէ դու ուզումես մնալ ինձ մօտ, դու կապրիս հանգիստ
և պատուով. եթէ աւելի լաւ ես համարում յետ դառնալ ձեր տունը,
ես քեզ այնպիսի հնարք կուտամ, որ այնտեղ ես հանգստութեամբ կա-
րողանաս ապրիլ։ Շահիման հաւատացրուց, որ նրան առաջ հաճոյ
էր անապատի բնակութիւնը և Մոհամմէդը յետ ուղարկեց նրան պարգե-
ներով։

Թաքուն չեն նրա թարթիները և ստորին կողմերը։ Նա գնում
է Աստիստան գործակալ, ուր լաւ լաւ գործեր է կատարում։ Ոչ մի
անտարակոյս նշան չէ ջոկում նրան ուրիշներից. նա ունի իւր անունը ինչ-

պէս ուրիշը։ Նրան կոչում են Էլ—Ամին, (հաւատարիմ մարդ)։ Իւր
մանկութեան ժամանակը կռիւ էր տալիս Կորէյշեանց հետ իմիասին
Հաշիմների ընդդէմ և Կորէյշեանք շատ անգամ ջարդ ու փշոր էին լի-
նում։ Մէկ ձիընթացքի մէջ նրա ուղտը յետ է մնում մի Բեդուինի
ուղտից և նա շատ նեղանում է և բարկանում։ Արաբատանը հար-
կաւոր չհամարեց իւր մարդարէին փառաւորել և բարձրացնել իւր քան
մարդկութիւնը և անչատել նրան իւր ցեղի գերդաստանի և ուրիշ տաւել
ստորին ախտերից։ Մոհամմէդական պատմարանները գրում են, թէ նա
սիրում էր իւր ձին և իւր ուղտը, թէ նրանց քրտունքը սրբում էր իւր
հանդերձի թևով։ Երբ որ նրա կատուն քաղցենում էր կամ ծարաւում,
ինքը վեր էր կենում դուռը բաց անում և ներս թողնում. խնամով պա-
հում էր մի աքլոր իւր մօտ իւրեան չար աչք չդիպչելու համար։ Իւր ըն-
տանի կենցաղավարութեան մէջ երևում է մեզ իբրև գերդաստանի ա-
ռաքինի հայր։ Շատ անգամ Ալիս և իւր աղջիկ Ֆաթմի պակից ծնած
Հասանի և Հուսէյնի ձեռները բռնում էր, պար էր անում և խաղացը
նում։ (*) Երբ որ տեսնում էր նրանց, նաև քարոզ տալու ժամանա-
կը, բռնում էր, պաչպչում էր, նստացնում էր իւր մօտ և ներողութիւն
խնդրելուց յետոյ նրանց անմեղութեան վրայ, դարձեալ սկսում էր իւր
ճառը։ Բէնու Թէմմամ ցեղի դարձից յետոյ նրանց գլխաւոր առաջնորդ-
ներից մէնը, Կայս Ասիմի որդին՝ Մէղինումը լինելով, մնաւ մի ան-
պատմ Մոհամմէդի մօտ, որ ծնկան վրայ բռնած ունէր մի պստի աղջիկ
և պաչպչում էր։—Այդ ինչ դաան է, որ դու հոստոստում ես, հարց-
ուց Կայսը։—Սա իմ երեխայս է, պատասխանեց Մոհամմէդը։—Սէր
Աստուծոյ, ասաց Կայիսը, ես չատ եմ ունեցել դրա նման պստիկ
աղջկերք և բոլորին կենդան կենդան թաղել եմ, ոչ մէնին էլ մի օր չը-
հոստոտելով։—Ով վատաբաղդ, կոչեց Մոհամմէդը, պիսի որ Աստուած
քո սիրտը զրկէր ամենայն մարդկային զգայութիւնից։ Դու չես ճանա-
չում մարդու ամենաքաղցր վայելչութիւնը։

Նրա պատմարանները չեն հաղում, ինչպէս և ինքը չէր աշխատում
թաղցնել իւր գլխաւոր կիրքը. «Երկու բան աշխարհումը, ասում էր նա,
ունին հրապոյր ինձ համար. այսինքն՝ կանայք և անուշահոտութիւնը,
բայց մաքուր երջանկութիւնը գտնում եմ միայն աղօթքի մէջ»։ Այս
հանգամանքի համար էր միայն, որ խափանեց նա իւր օրէնքը և հրա-

(*) Այս զրոյցները պատմութեան արժէք չունին, հեղինակը կամենում է
միայն ցոյց տալ Արաբացւոց կարծիքը Մոհամմէտի բարք ու վարքի վրայ և
նորա վիպասանութեան ընդհանուր ոճը։

տարակեց իւր մարգարէական առանձնաշնորհութիւնը։ Իւր ամենայն հրամաններին հակառակ, նա ունէր տասն ու հինգ կին, ասանք քսան ու հինգ են ասում։ Նուրբ նախանձաւորութիւնը նրա բնաւորութեան գծերից մինն էր։ Ղօրանի մի տունը արգելում է որոշակի միայնակ նրա կնանոցը երկրորդ անգամ ամուսնանալ նրա մահից յետոյ։ Իւր վերջին հիւանդութեան ժամանակը ասում էր նա Այիշին։ "Զէ՞ր կամենալ, որ ինձանից առաջ մեռնէիր, որ ես փաթաթել էի քեզ պատանքումը, աղօթք էի արել քո վրայ և թաղել էի քեզ։ — Ես կը-ցանկանայի այդ, ասեց Այիշան, եթէ կարծիք չտանէի, թէ դու ինձ թաղելուց յետոյ կգաս այստեղ և կմիթարես քեզ ուրիշ կանանց հետ։ Այս ճարտար պատասխանը շարժեց մարգարէի ժպիտը։

Նրա ամուսնութեան անցքը Խփտիացի Մարիամի հետ տարօրինակ բաներից մինն է։ Մի Խփտիացի գերի քրիստոնեայ կին, մի քանի գիշեր շարունակ նախապատիւ համարուեցաւ քան թէ Օմարի և Աբուբէկի ազնիւ դստերքը, Քորէյշենց ամենամաքուր արիւնից։ Այս նախամեծարութիւնը սաստիկ խռովութիւն ձգեց կանանոցի (հարամ խանայի) մէջ, վանորոյ վայելուչ համարեց Աստուած յայտնել այս յետագոյ պատգամը։ — Ով Աստուծոյ առաքեալ, ինչու համար քո կանանց կամքը կատարելու մտքով պիտի հրաժարուես այն բանից, որ քեզ Աստուած թոյլ է տալիս։ Տէրը բարի է և ողորմած. նա լուծանում է անխոհեմ երդումները։ Նա է քո տէրը. նրա մօտ է գիտութիւնը և իմաստութիւնը։ Այսպէս ապստամբները պատժելու իշխանութիւն ստանալով, մարգարէն դուրս արեց նրանց մի սմիս, որ բոլորը տուեց Մարիամին։ Յետոյ Աբուբէքրի և Օմարի աղաչանքով համաձայնեցաւ վերստին առնուլ նրանց դստերքը այս երկրորդ պատգամով զղուշացնելուց յետոյ։ — "Եթէ դուք հակառակ կլինիք մարգարէին, գիտացէք, որ Աստուած նրան կուսակից կլինի, նրա կողմը կպահէ։ Նրա ձեռին է դուրս հանել ձեզ ամէնքներիդ և տէրը կասէ նրան ձեզանից առաւել լաւերը, Մոհամմէդական բարեպաշտ, հնազանդ և անձնանուէր կնանիքներից։

Շատ մեծ և երեւելի դայթակղութիւն էլաւ Մոհամմէտի ամուսնութեան ժամանակը Զէյնաբի հետ։ Սա մարգարէի որդեգիր Զէյդի հետ ամուսնացած էր։ Մի օր Մոհամմէտը գնաց Զէյդին տեսնելու, բայց տանը գտաւ միայն Զէյնաբին միայնակ և այնպիսի թեթև հագուստով, որ հագիւ էր թաղցնում նրա ձեռների գեղեցկութիւնը։ Իւր անզգոյշ այլայլութիւնը յայտնեց այս խօսքով։ — "Գովութիւն Աստուծոյ,

որ կառավարում է մարդու սիրտը"։ Յետոյ նա հեռացաւ դնաց. բայց այս բնաբանի միտքը ծածուկ չմնաց Զէյնաբից, որ և յայտնեց նա Զէյդին։ Սա վազեց ուղղակի Մոհամմէտի մօտ և ասեց նրան, թէ կամենում է արձակել իւր կինը։ Մարգարէն առաջ ներհակացաւ այս բանին, բայց Զէյդը հաստատ մնաց իւր մտքի մէջ։ Զէյնաբը, ասում էր նա, հպարտ իւր ազնուատոհմութեամբ, իշխանութիւն է անում ինձ վրայ և դառնացնում է ամուսնութեան երջանկութիւնը։ Թէպէտ սովորութիւնը արգիլում էր Արաբացւոց ամուսնանալ իւրեանց որդիքների կանանց հետ, բայց մի քանի ամսից յետոյ, Զէյնաբը մըտաւ մարգարէի կանանց կարգը։ Մի քանի տուն Ղորանումը յաւելացուցանելով, մարգարէն խստակրօն Մոհամմէտականների տրտունջը կորեց և ներողամիտ Զէյդը տեսաւ իւր անունը սուրբ գրքի մէջը։

Մի խօսքով Մոհամմէտը երևում է մեզ ինչպէս մի քաղցրաբարոյ, զգայուն, հաւատարիմ և անոխակալ մարդ։ Նրա սէրը անկեղծ էր և բնաւորութիւնը առ հասարակ բարի։ Ով որ նրա ձեռը սեղմում էր, նա սրտով պատասխան էր տալի այս բարեկամական նշանին և երբէք առաջ ինքը չէր բաց թողում ուրիշի ձեռը։ Նա բարեում էր մանր ելեխանցը և մեծ սէր ու դութ էր նշանց տալի կանանց և տկարներին։ — Դրախտը ասում էր նա, մօրերի ոտի տակն է։ Ոչ փառասիրութիւնը, ոչ կրօնական իշխանութիւնը չկարողացան չորացնել նրա անձնական զգայութիւնների սերմը։ Ի՞նչ քիչ նմանութիւն կայ սրա և այն մաքիաւելեան և անսիրտ փառասիրի մէջ, որ գիւտաշնական բանաստեղծութեան մէջը յայտնում է իւր խորհուրդը Ջօվիրին։ — Ես պիտի վարեմ Աստուծոյ ամէն արարածները. ոչինչ են իմ փառքը եթէ ճանաչեն ինձ ուրիշները։

Բայց Մոհամմէտը ընդհակառակն բաց էր անում իւր սիրտը ամենայն մարդու առաջ։ Նա պահել էր Արաբացւոց բարք ու վարքի ամենայն չափաւորութիւնը և պարզութիւնը. մեծութիւնը նրա սիրտը չէր փոխել։ Նրա հասարակ անկողինը մի պարզ վերարկու էր և նրա բարձը մի կաշի արմաւենու տերևներով լցրած։

Նա ինքն էր կթում իւր ոչխարները և նստում էր գետնին իւր հագուստները և հողաթափները կարկատելու համար։ Նրա ամենայն գնացքը ցոյց է տալիս այն կարծիքի ստութիւնը, որ նրան համարում են ձեռներէց և յանդուգն բնաւորութեան տէր։ Նա երևում է սովորաբար թոյլ, երկմիտ և սակաւ անձնապաստան։ Պ. Վէյլը նաև երչոտ է ասում նրան. ստոյգ է, որ նա առ հասարակ ահով էր առաջ գնում կռուի ժամանակը և համարեա թէ ընդդիմանում էր միշտ իւր ընկերների հրաւիրելուն։ Նրա զգուշութիւնները պատերազմների մէջ անվայել էին մի մարգարէի։ Նա զրահապատում էր երկու զրահով և և գնում էր զլխին սաղաւարտ պահպանելով, որ ծածկում էր նրա ե-

ՀԱՅԱՍՏԱՆ

բեսը։ Օմարից փախչելիս նրա զրուցիչը չափազանց սնապատչած էր Աստուծոյ առաքեալի համար. ընկած մի փոսի մէջ՝ նա կենդանի մնաց միայն Անդարների հաւատարմութեամբ, որոնք հանեցին նրան փոսից արիւնով և ցեխով շաղախուած։ Նրա զգուշութիւնը երևում է ամենայն քայլափոխումը։ Նա լսում էր յօժարութեամբ ուրիշի խորհուրդը և ցոյց էր տալիս մեծ դիջումը։ Շատ անգամ տեղի էր տալիս ժողովրդի պահանջողութեանը, ընդունում էր նրանց կարծիքը և ակամայ կամօք համաձայնուում էր կռիւ գնալ, որ իւր խոհեմութիւնը արդելում էր։ Նրա աշակերտները ունենալով առաւել բարձր կարծիք նրա առաքելական ձիրքի վրայ քան թէ ինքը և համարելով նրան առաւել մեծ քան թէ նա ինքը, նրա տարակուսութեան ու զգուշութեան պատճառը չէին հասկանում։

Բոլոր զօրութիւնը նոր կրօն հիմնելու մասին պատկանում է Օմարին։ Օմարը արդարև է Իսլամի Պօղոս առաքեալը, կորող և վճռող սուրը։ Աներկբայ Մոհամմէտի անորոշ բնաւորութիւնը վտանգի մէջ կձդեր նրա գործը, թէ որ չմիաբանուէր նրա հետ այս փառասէր աշակերտը, որ միշտ պատրաստ էր հանել սուրը ընդդէմ նրանց, որոնք առանց քննութեան չէին ընդունում այն կրօնը, որ առաջ հաստատում էր նա ինքը։ Օմարի դարձը Իսլամի յաջողութեան կորական բոլէն էլաւ։ Մինչև այն ժամանակ Մոհամմէտականները թաքչում էին իւրեանց կրօնը վարելու համար և չէին համարձակուում դաւանել իւրեանց հաւատը հրապարակով։ Օմարի վստահութիւնը, նրա սնապարծութիւնը Մոհամմէտականութիւնը դաւանելու մասին և ահը՝ որ ազդում էր նա, համարձակութիւն տուեց Մոհամմէտականներին երևել յայտնապէս։ Մոհամմէտը միտք չունէր բնաւ Արաբստանի սահմանից դուրս տարածել իւր կրօնը և չէր կարծում, թէ Իսլամը կարող է վայելուչ լինել և ուրիշ ազգերի համար։ Իսլամի աշխարհակալ սկզբունքը, այն խորհուրդը, թէ ամենայն աշխարհ պիտի Մոհամմէտական դառնայ, է Օմարի խորհուրդը։ Սա Մոհամմէտի մահից յետոյ կառավարելով արդեամբ թոյլ Աբուբեկրի անունով, այն բոլէն, երբ մարդարէի չէնքը, հաղիւ միայն զծագրած, ուզում էր քանդուիլ, քաջալերում է Արաբացւոց ցեղերի յուսահատութիւնը և վերջին հաստատում է կրօնը։ Թէ որ ուժգին բնաւորութեան կատաղութիւնը հաւատոյ վարդապետութեան մէջ կարող է կոչուիլ հաւատ, ապա Օմարը ստուգիւ գլուխ էր ամենայն հաւատացեալների։

Մարդարէի պաշտօնն ունի միշտ իւր փչերը, և Մոհամմէտը իւր ազդակիցների մէջ, որոնք պատրաստ էին մոլորեալ համարիլ նրան, չէր կարող չպատահիլ դժուարութիւնների։ Այս դժուարութիւններից ազատում էր իւր անձը առհասարակ շատ վարպետութեամբ, խորշելով չափազանց մեծացնելուց իւր պաշտօնը և վախենալով ամենի հեռի տարածելուց իւր վստահութիւնը։ Զարմանալի բան է երևում, որ Աստուծոյ առաքեալը ստանում է հարուածներ, տեսնում է իւր նախատեսութիւնները ոչնչացրած, յաղթութիւնները կիսատ։ Գերբնական երևելի վէպերի մէջ գործերը շատ ուրիշ տեսակ են առաջ գնում. այն տեղ ամենայն բանը կորական է և կատարեալ, ինչպէս վայելում է երբ որ Աստուած խառն է մի բանի մէջ։ Հրաշագործութեան ժամանակը անց էր կացել։ Ահա պատճառը, որ այս վերջին մարդարէի կեանքումը ամենայն բանը կատարուում է կիսով չափ, ինչպէս ամենայն մարդկային և պատմաբանական բանները։ Նա յաղթուում է, սխալուում է, փախչում է, ուղղում է իւր սխալանքը, ընդդիմաբանում է ինքն իւրեան։ Մոհամմէտականները գիտեն մինչև 225 ընդդիմաբանութիւններ Ղուրանի մէջ, այսինքն՝ 225 վկայութիւններ, որոնք յետոյ խափանուել են մի ուրիշ քաղաքականութեան համար։

Ինչ որ պատկանում է Մոհամմէդի կեանքի այն ընթացքին, որոնք մեր աչքումը արատաւոր են երևում, անիրաւութիւն կլինէր մեր կողմից խստութեամբ դատել։ Յայտնի բան է, որ այս գործողութիւնները չունէին նրա ժամանակների վրայ և չունին Մոհամմէտական պատմաբանների վրայ մի ևնոյն ազդեցութիւնը՝ ինչպէս մեզ վրայ։ Բայց այնու ամենայնիւ չէ կարելի մերժել, որ նա շատ անգամ անվստահութեամբ չէր գործում չար բանը և շատ լաւ իմանում էր, որ հնազանդում է իւր յատուկ կամքին և ոչ թէ Աստուծոյ ազդեցութեանը։ Նա թոյլ է տալիս աւազակութիւն, առաջնորդում է մարդասպաններին, խաբում է և հրամայում է խաբել պատերազմի ժամանակը զանազան հնարքներով։ Կարկի է առաջ բերել հաղարաւոր հանգամանքներ, ուր որ նա խանգարում է բարոյականութեան կանոնները քաղաքական օգուտ համար։ Նրա առաւել օտարոտի բաներից մէնը այն է, որ խոստանում է Օթմանին նրա ամենայն մեղաց յառաջագոյն թողութիւն մինչև մահը և փոխ է ստանում նորանից։ Նա անդութ էր ծաղր առնողների վրայ։ Միակ կինը, որոյ հետ նա խիստ վարուեցաւ Մէկքի առման ժամանակը, էր Ֆէրթէնա երաժիշտը, որ երգում էր սովորաբար կծոզական երգեր Մոհամմէտի վրայ։ Նրա վարմունքը իւր քարտուղարի հետ նոյնպէս շատ նշանաւոր է։ Այս մարդը, որ գրում էր Ղուրանը մարդարէի ասելուց յետոյ, շատ մօտիկ տեղեակ էր նրա ամենայն խորհուրդներին։ Մոհամմէտը չէր սիրում նրան, մեղադրելով նրան իւր ասացուածների բառերի և խմաստի փոփոխութեան և այլայլութեան մէջ, մինչև որ քարտուղարը կասկածելով նորանից փախաւ և ուրացաւ Իսլամը։ Մէկքի առնելուց յետոյ նա ընկաւ Մոհամմէտականների ձեռքը։ Մոհամմէտը ներեց նրան, միայն սաստիկ պատիժ տալուց յետոյ և երբ որ ուրացողը կրկին փախաւ, Մոհամմէտը բարկանալով յայտնեց Մոհամմէտականներին իւր անբաւականութիւնը, որ նրանք չազատեցին նրան այն մարդու ձեռքից։

Դարձեալ անիրաւութիւն կլինէր դատել խստութեամբ և մեր չափով չափել Մոհամմէտի գործողութիւնները, որոնք որ մեր օրերումը պիտի համարուէին խաբէութիւն։ Վահաբայեաց աղանդի առաջնորդը Աբդ-էլ-Վահաբը մի աստուածութիւն դաւանողը Իսլամի Սատանը չէր վառում իւր զօրականների կոյր քաջութիւնը, տալով նրանց պատերազմից առաջ ազատութեան թուղթ իւր ձեռով ստորագրած և հասցէով դըրախտի դանձապետի վրա, որ սա ընդունէ նրանց խիղճն և առանց յառաջադոյն հարց ու փորց անելու։ Քուանների ամենայն հիմնադիրները կամ Ալիէրի կրօնական կարգերը ներկայացնումեն ճգնաւորների և համարձակ խաբեբաների երկրիմի ընաւորութիւնը։ Սիդի-Ալիան՝ նոր մարգարէքների մէջ առաւել օտարոտին, ոչ ինչ չէր, բայց միայն ձեռնածու և զաղանիներ ցուցանող, որ դիտաց հմտութեամբ առաջ տանել իւր արուեստը. այլ ոչ ոք ճանապարհորդներից Ալիերումը տեսած չէ, որ Ալիայեանք դերբախաբ լինէին իրենց սեփհական աչքակապութիւններից։

Աբդարն անվայել է համեմատել Մոհամմէդին այս տողին ասիճանի խաբեբաների հետ։ Բայց պէտք է խոստովանիլ, որ Մարգարէ լինելու առաջին պայմանն է ցնորեալ դոյանալ։ Մոհամմէտը արժանի չէ այս պատուանունին։ Նրա բոլոր կեանքը անց է կենում մտածութեան, կարդաղրութեան և քաղաքականութեան մէջ, որոնք որ սակաւն մըտանում Աստուածային երևոյթներով պաշարուած աստուածաղդեցիկ մարդու ընաւորութեան մէջ։ Ոչ մի մարդ այնպէս զգաստ չէ էլած երբէք որպէս նա, ոչ մի մարդ երբէք նրանից լաւ խելքը գլխումը չէ ժողովել։ Նեղ և անկատար կլինի խնդիրը, եթէ հարցնենք, թէ Մոհամմէդը հաւատումէր իւր յատուկ առաքելութեան՝ թէ ոչ. պատճառ, մի կողմից հաւատը միայն կարող է զօրացնել մարդուն կռուի մէջ իւր բարոյական կարծիքի համար և միւս կողմից ամենին անհաւատալի բան է, որ մի մարդ կարծելով մարգարէական դրոշմը իւր ճակատին դրած, Գաբրիէլ հրեշտակից ստանայ իւր վերին ազդեցութիւնը, որ ծագումէր իւր կրքերից և առաջ առաջ մտածած խորհուրդներից։ Պ. Վէյլը և Պ. Վաշինդտոն-իրվինդը կարծումեն, թէ նրա մարգարէական կեանքի առաջին ժամանակը մի սրբազան ազդեցութիւն բորբոքում էր նրա սիրտը և թէ խոհական չրջանը յետոյ միայն երևեցաւ, երբ որ զանազան քաղաքական հանգամանքները նսեմացրին նրա վերին ազդեցութեան առաջին գեղեցկութիւնը։

Ղուրանի վերջին սուրաթները, որոնք անչափ փայլումեն բանաստեղծութեամբ՝ պիտի լինին նրա բնական համոզման արդիւնքը. բայց առաջին սուրաթները, որոնք լի են քաղաքականութեամբ, վիճաբանութեամբ, հակառակախօսութեամբ, անիրաւութեամբ, պիտի լինեն նրա գործնական և հանճարեղ հասակի աշխատանքը։ Կարելի է

ասել, որ նրա մարգարէական հանճարի առաջին յայտնութիւնները դրոշմած էին մի մեծ և սրբազան բնաւորութեամբ։ Նրան տեսնում էին միայնակ աղօթք անելիս Մէկքի չրջակայ անապատ ձորերումը։ Ալին, Աբութալիբի որդին, իւր հօրից և իւր հօրեղբօրներից ծանուկ առաջնորդումէր նրան երբեմն և նրա հետ իմիասին աղօթք էր անում, նմանելով նրա չարժմունքին ու մարմնոյ դիրքին։ Մի օր Աբութալիբը բռնեց նրանց այս գործի մէջ. — ինչ էք անում, ասաց նրանց և ինչ կրօն էք դաւանում, որդիք։ — Աստուծոյ, նրա հրեշտակների, նորա մարգարէների կրօնը, պատասխան տուաց Մոհամմէտը, Աբրահամի կրօնը։ Սեծ է երևում նա և իւր առաքելութեան առաջին փորձերի մէջ։ Մի երեկոյ քարողութեան մէջ օրը անցուցանելուց յետոյ, գնաց իւր տունը, չպատահելով ոչ մարդի, ոչ կնոջ, ոչ աղատի, ոչ ծառայի, որ նախատինք չտար նրան և չմերժէր նրա վարդապետութիւնը։ Ընդհակառակ, յուսահատած՝ փաթաթուեցաւ իւր վերարկուումը և ընկաւ մի նաճայի (ճիլոբ) վրայ։ Ահա այն ժամանակն էր, որ Գաբրիէլը յայտնեց նրան այս զեղեցիկ սուրաթը. "ով դու, որ փաթաթուել ես վերարկուիդ մէջ, վեր կաց և քարոզիր . . . Բայց սրբութեան այս ատուշահոտութիւնը, հազիւ է երևում նրա մէջ իւր գործունէութեան ժամանակը։ Կարելի է հասկացաւ, թէ բարոյական զգայողութիւնը և հոգու մաքրութիւնը բաւական չեն կրթի և ցանկութեան ընդդէմ կըռիւ տալու համար։ Երևում է, որ երբ Մոհամմէտը հաւատաց իւր առաքելութեան առանց դաղտնի խորհրդոյ, վերջումը սկսաւ երկբայել, բայց չարունակեց առաջ գնալ, առաջնորդ ունենալով ինքեան միայն իւր միտքը և կամքը, ինչպէս Յովհաննայ դարկը լոկ կին դառաւ այնուհետև, երբոր սկսաւ մտածել իւր առաքելութեան վրայ և կորուսանել իւր անկեղծութիւնը։ Մարդը չատ սակաւ է աստուածային առաքելութիւնը երկար ժամանակ կրելու համար, և նրանք մնային անտարատ, որոնց Աստուած չուտով թեթեացրուց առաքելութեան ծանր բեռներից։

Յետագայ խնդիրը դուցէ առաւել օտար երևի, բայց արժանի է քննութեան. մինչև որ աստիճան Մոհամմէտի աչակերտները հաւատում էին նրա մարգարէական առաքելութեանը։ Կարելի է օտարոտի երևել երկրայութեան տակ ձգել այն մարդկանց կատարեալ ինքնայօժարութիւնը և բացարձակ համոզումը, որոնց հաւատի վառումն սկիզբ տարաւ առաջին ոստիկից մինչև աշխարհի ծայրերը։ Բայց երևելի զանազանութիւններ են այս տեղ հարկաւոր։ Առաջին հաւատացեալների այսինքն՝ Մոհաղժիրների և Անղարների (*) հաւատը պարտէ խոստո-

(*) Մոհաղժիրք էին Մէկքացիք, որոնք առաջնորդեցին Մոհամմէտին փախստական ժամանակը, այլ Անղարք էին Մէտինացիք, որոնք ընդունեցին նրան և պաշտպան էլան նրան ընդդէմ նրա քաղաքակիցների։

վանել, դրեթէ ազատ էր։ Բայց թէ որ դուրս ենք գալիս այս փոքրիկ ժողովից, որ մի քանի հազար մարդուց սուլի չէին, մենք գըտնում ենք Մոհամմէտի մօտ բոլոր Արաբստանումը մի միայն յայտնի անհաւատութիւն։ Մեկքացուց ընդարձակ ներհակութիւնը բոլորովին չնուաճուեցաւ երբէք. Եպիկուրեան աղանդը (մարմնապաշտութիւն), որ թագաւորում էր Կորէյշեանց մէջ և երեւելի բանաստեղծների թեթև և ազատ միտքը տեղ չէին թողնում խորին համոզման համար։ Իսկ ուրիշ ցեղերի մասին յայտնի է, որ նրանք ընդունեցին Իսլամը առ արտաքս և եթ առանց տեղեկանալու հաւատոյ վարդապետութեանը և առանց երեւելի բան համարելու։ Նրանք մեծ անպատշաճութիւն չէին համարում կատարել Իսլամի ծէսերը և մուռանալ իսկոյն մարգարէի հռանալուց յետոյ։ Երբ որ Քալիդը եկաւ Դժադհիմների մօտ, յայտնելով հրամանը ընդունել մարգարէի հաւատը, այս բարի մարդիկը չէին հասկանում թէ ինչ են ուզում նրանցից. նրանք այնպէս կարծեցին, թէ բանը կրակապաշտութեան վրայ է և ցած դրեցին իրենց զէնքերը կոչելով. "մենք կրակապաշտ ենք։" Թակիֆի հզարտ ցեղը մի առանձին պայման առաջադրեց իր դարձի առթիվ սրբելու համար. նրանք համաձայնուեցան դաւանել նոր հաւատը այն պայմանով, որ երեք տարի ևս պահպանեն իրենց Լաթ կուռքը։

Երբ որ այս պայմանը մերժուեցաւ, նրանք խնդրեցին Լաթը պահպանելու համար մի տարի ժամանակ, վեց ամիս, մի ամիս։ Նրանց հզարտութիւնը կամենում էր մի առանձնաշնորհութիւն. վերջապէս նուաճուեցան նրանք՝ պահանջելով աղօթից ազատութիւն։ Թէմի—միթների դարձն ևս արժանի է հետաքրքրութեան. նրանց դեսպանները յանդգնման էլան գոռոզարար և մերձենալով մարգարէի և նրա կանանց դասիկոնին "դուրս եկ Մոհամմէտ, ձայն տուեցին նրանք. մենք առաջադրում ենք քեզ փառքի կռիւ (*)։ մենք բերել ենք մեր բանաստեղծին և մեր հռետորին։" Մոհամմէտը դուրս եկաւ և նստեցան վիճաբանները չորս կողմովը։ Օտարիզ հռետորը և Զիբրիքան բանաստեղծը, մինը արձակ չարաղրութեամբ, միւսը ոտանաւորներով գովաբանեցին իրենց ցեղի գերազանցութիւնը։ Քայսը և Հասանը Թաբեթի որդիքը, պատասխանեցին նոյն տեսակ արձակ և ոտանաւոր բանով և հաստատեցին այնքան աղդու կերպով Մոհամմէտականների դերակայութիւնը, որ Թէմիմիթները խոստովանուեցան յաղթուած։ "Մոհամմէտը արդարև մի այնպիսի մարդ է, որին յաջողում է երկինքը, ասացին նրանք, նրա հռետորը և նրա բանաստեղծը յաղթեցին մերերին,,. և նրանք դառան Մոհամմէտականք։

Ամենայն դարձեր լինում էին այս կերպով։ Պայմաններ էին կապում,

(*) Մուֆաղհարայ — վեճ ի մէջ բանաստեղծայ։

ընդունում էին և թողնում։ Ցեր ամիրը, Թոֆայլի որդին, եկաւ Մոհամմէտի մօտ և ասաց նրան. "եթէ ես ընդունիմ Իսլամը, ինչ պատիւ կստանամ,,։— Այն պատիւը, ինչ որ ուրիշ Մոհամմէդականքը, պատասխանեց Մոհամմէդը, դու կստանաս մի և նոյն իրաւունքները և մի և նոյն պարտաւորութիւնները ինչպէս ամենքեան։ Այս հաւասարութիւնը ինձ հերիք չէ։ Հրատարակիր ինձ քո ժառանգ աղդի իշխանութեան մէջ, և ես կընդունիմ քո դաւանութիւնը։ Ինձ չէ պատկանում իշխանութիւն կարգելը ինձանից յետոյ. Աստուած կտայ իշխանութիւնը նրան, ումը որ ինքը կհաճի ընտրել։ Հապա հիմիկս և եթ բաժանենք իշխանութիւնը։ Դու թագաւորեա քաղաքների վրայ և ես վերանաբնակ քրդերի և հստատարնակ Արաբների վրայ։ Մոհամմէտը չկամեցաւ համաձայնիլ այս պայմանների հետ, և Ամիրն ևս չուզեց Մոհամմէտական դառնալ։

Մոհամմէտի մահից յետոյ նրա բարեկամ Արաբացուց ցեղերի հաւատը հասաւ իր վերջին տկարութեան կէտին. ուրացութիւնը եղաւ ընդհանուր։ Ոմանք ասում էին, թէ եթէ Մոհամմէդը ճշմարիտ առաքեալ էր Աստուծոյ, նա չէր մեռնիլ. ուրիշները հաստատում էին, թէ նրա կրօնը պիտի տեւէր միայն իր կենդանութեան ժամանակը։ Այն ինչ նրա հիւանդութեան համբաւը տարածուեցաւ, իսկոյն երեւեցաւ բոլոր Արաբստանումը մարգարէների խուռն բազմութիւն. ամենայն ցեղ կամեցաւ ունենալ իր համար սեփական մարգարէ ինչպէս Կորէյշեանք։ Բայց համարեա, թէ այս ամենայն մարգարէքը երկրորդական խառնակիչներ էին միայն և ամենեին զուրկ կրօնական երկիւղածութենից։ Դիմելով զէպի պարզամիտ և ոչ այնքան խորամանկ ցեղերը, որպէս Կորէյշեանց ցեղը, նրանք զանազան աչքակապութիւններ էին գործածում ինչպէս իրենց աստուածային առաքելութեան ապացոյց։ Նրանցից մինը, Մուսէյլամա անունով, աշխարհէ աշխարհ ման գալով ցոյց էր տալիս մի փոքրիկ չիչ նեղարերան, որի մէջ դրել էր մի ձու հնարքով իմն, որ սովորել էր մի Պարսիկ աչքակապից։ Նա կարդում էր նոյնպէս չափարերական բաներ, որ ընծայում էր իբրև երկրորդ զորանի ոտանաւորներ։

Ո՞վ կհաւատայ, թէ այս ցած խարերայն ճարտակ (սաթրանջ) խաղի պէս ձևին բռնած ունէր շատ տարերով մոհամմէտական ամենայն զօրութիւնները և Մոհամմէդի ճակատագրի կշիռը։ Նա դառաւ մի երկիւղալի նախանձաւոր Սէղճահ Մարդարէուհին, որին որ յաջողեցաւ ժողովել մի հզօր զօրք Թէմիմիներից։ Մուսէյլաման նեղ տեղն ընկած՝ Հաճրի մէջ ուրիշ հնարք չտեսաւ զէնքնկեց առնել իր զեղեցիկ նախանձաւորը, բայց միայն առաջադրել նրան ծածուկ խօսակցութիւն։ Մարդարէն և մարգարէուհին այս առանձին խօսակցութենից յետոյ ամուսնացան։ Երեք օրից յետոյ Սէղճահը յետ դարձաւ իր բանակը, ուր որ

նրա զինուորները հարցրին նրան Մուսէյլամի հետ խօսակցութեան վախճանի մասին։ "Ես նրան ճանաչեցի ճշմարիտ մարգարէ, ասաց նա և ամուսնացայ նրա հետ,,։—Մուսէյլման տալիսէ մեզ հարսանիքի խիլայ, հարցրեցին Թէմիմիթեանք։— Նա այդ բանի մասին չէ խօսացել պատասխանեց ՍիդՋան։ —Այդ ամօթ է քեզ համար և մեզ համար, որ նա ամուսնացաւ մեր Մարգարէուհիի հետ և մեզ ոչինչ չտուց։ Ցետ դարձիր նրա մօտ և պահանջիր մեզ համար մի պարգև։ Սէդճանը գնաց ՀաղՋրի քաղաքը և տեսնելով, որ դուռը փակած է, կանչել տուց իւր ամուսինը, որ երևեցաւ պատի վրայ։ Հաշտութեան աւետաւորը առաջարկեց նրան Թէմիմիթեների դանդաղը։— Շատ լաւ է պատասխանեց Մուսէյլամը, դուք կատանաք բաւականութիւն։ Ես յանձնում եմ քեզ հրատարակել յետագայ յայտարարութիւնը. "Մուսէյլաման, Աստուծոյ մարգարէն աղաչում է Թէմիմիթներին այն հինգ աղօթքների առաջինից և վերջինից, որ նրա եղբայրակից Մոհամմէդը դրել էր նրանց վրայ,,։ Թէմիմիթները ընկալան այս արտօնութիւնը յանկատակ և յայտնի է, որ նրանք այնուհետև առաւօտեան և երեկոյեան աղօթքը չէին կատարում։ Այս պատմութիւններից կարելի է եզրակացուցանել, թէ ինչքան սակաւ էր արմատացած Արաբացւոց կրօնական շարժողութիւնը։ Այս շարժողութիւնը մի շատ փոքրիկ ժողովից դուրս բացարձակապէս ոչինչ կրօնական ներգործութիւն չունէր։ Պատմում են, թէ մի յաջողութենից յետոյ, Օմարը հրամայեց, որ աւարի բաժինը տանայ ամենայն մարդ համեմատութեամբ զորանի այն մասնի հետ, ինչքան նա իմանում էր անդիր։ Երբ որ հարց ու փորձ արին, յայտնի եղաւ, որ առաւել քաջ զինուորները ոչինչ չգիտէին անդիր զորանից, բայց միայն սկիզբը. այս հանգամանքը շատ ծիծաղ պատճառեց։ Այս զօրաւոր և պարզամիտ մարդիկը չէին հասկանում խորհրդաւոր խմաստը։ Միւս կողմից Մոհամմէդական հաւատը դուռ Մէկքի հարուստ և հպարտ գերդաստանների մէջ ընդդիմութեան կենդրոն, որի վրայ չկարողացաւ լիովին յաղթական հանդիսանալ։ Աբու սոֆիան ընդդիմութեան ղլուխը չբռնեց երբէք ուղիղ սրտով ուղղահաւատի ընթացքը։ Մէկքի առնելուց յետոյ, Մոհամմէդի հետ առաջին տեսութեան ժամանակը ասաց նրան Մահմէդը. Հա, Աբուսոֆիան, խոստովանում ես այժմ, որ ուրիշ Աստուած չկայ, բայց միայն Ալլահը։ — Այո, պատասխանեց Աբուսոֆիան։ —Ձեռ խոստովանել նոյնպէս, որ ես Ալլահի առաքեալն եմ։ —Ներեա իմ պարզմտութեանս, կրկնեց Աբուսոֆիան. բայց այդ մասին դեռ ես փոքր ինչ երկբայութիւն ունիմ։ Շատ կծու վէճեր վերկայում են այն կեղծաւոր և ծաղրածու ոճը, որով խօսում էր միշտ այս մարդը նոր հաւատի վրայ։ Ուստի յայտնի է, որ բաղում Մէկքացիք բաժանորդ էին նրա զգացողութեան։ Մէկքումը կար խելացի, հարուստ և հին Արաբացւոց բանասաեղծութեան մէջ մնած մարդկան մի

ուռնծ ընկերութիւն իրեն անհաւատ։ Այս մարդիկը ունէին առաւել շատ ճաշակ և նրբամտութիւն նորածին աղանդին մի կենդանի ընդդիմադրութիւն առնելու համար. նրանք ընդունեցին Իսլամը, բայց պահպանելով իրանց սովորութիւնները և իրանց անօրէն գնացքը։ Այս է Մոնաֆիկեան կամ սուտ Մոհամմէդականաց միաբանութիւնը, որ այնչափ մեծ խաղ է խաղում Ղորանի մէջ. Հօնայինի պատերազմի ժամանակը, ուր որ Մոհամմէդականքը խորտակուեցան և փախան, նրանք չծածկեցին իրանց չարասէր ուրախութիւնը։ Հաւատս վկայ, ասաց Քալիդէն, կարծեմ որ այս անգամ Մոհամմէդը հասաւ կախարդութեան ծայրը։ Ահա մոխիկ արէք նրանց, ասում էր Աբուսոֆիանը, նրանք կըվազեն այնքան, մինչև որ ծովը կանգնեցնէ նրանց։ Մոհամմէդը շատ լաւ գիտէր, ինչպէս պէտք է պատժել նրանց. բայց իրրև հմուտ քաղաքական բաւականանում էր միայն նրանց սրտաքին հնազանդութեամբ և նաև կողոպուտի բաժինը նրանց առաւել էր տալի քան թէ իւր հաւատարիմներին։

Իսլամի բոլոր առաջին դարը կռուով անց կացաւ այս երկու հակառակ միմեանց ժողովի մէջ. մի կողմից հաւատարիմ ՄոհաղՋիրները և Անղարները, միւս կողմից անհաւատները, որոնց գլուխն էր Օմէյադեան ազգն կամ Աբու—Սուֆիանը։ Անկեղծ Մոհամմէդականները իրանց բոլոր զօրութիւնը ունէին Օմարի մէջ. բայց սրան սպանելուց յետոյ, այսինքն՝ տասն երկու տարի Մոհամմէդի մահից յետոյ հակառակորդի ժողովը յաղթող հանդիսացաւ Օթմանի ընտրութեամբ, որ Մոհամմէդի անհաշտ թշնամու Աբու—Սոֆիանի հօրեղբօր որդին էր։ Օթմանի բոլոր ամիրապետութիւնը ընդդիմակայութիւն դառաւ մարդարէի բարեկամների ընդդէմ, որոնք գործերից հեռացած էին և սաստիկ հալածմունքի մէջ։ Այնուհետև նրանք չկարացին երբէք վերստին ըստանալ իշխանութիւնը։ Դաւառները չէին կարող համբերել, որ ՄոհաղՋիրների և Անղարների սակաւաթիւ ազնուապետութիւնը Մէկքումը և Մէդինումը հաւաքուած յանդգնութեամբ իւր ձեռքը ձգէր միայն ամիրապետի ընտրութեան իրաւունքը։ Այլն, Իսլամի առաջին աւանդութեան ճշմարիտ փոխանորդը էլաւ բոլոր իւր կեանքումը մի թոյլ մարդ և նրա ընտրութիւնը չընդունուեցաւ երբէք ստուգիւ գաւառներում։ Ամենայն կողմից ձեռը ձգում էին դէպի Օմիադեան ազգը, որ պահպանում էր միշտ Ասորի սովորութիւնները և օգուտները։ Այս ուրեմն Օմիադեանների ուղղափառութիւնը էլաւ միշտ իսկ կասկածելի։ Նրանք խմում էին գինի, կատարում էին կռապաշտութեան ծէսերը և արհամարհում էին մարգարէի աւանդութիւնը, Մոհամմէդականների բարքը և Մոհամմէդի ընկերների մաքուր բնաւորութիւնը։ Ուստի այն անեղ տեսարանը, որ երևում է Հիճրեթի առաջին դարում, ողջոյն այս դարը պարապած է ջնջել առաջին Մոհամմէդականներին,

Իսլամի ճշմարիտ հայրերին։ Ալին՝ սրբազնագոյն մարդը, մարդարէի որդեգիրը, որին Մոհամմէդը հրատարակեց իւր փոխանորդ, անողորմաբար սպանուեցաւ։ Հուսէինը և Հասանը, նրա որդիքը, որոնց Մոհամմէդը բռնում էր ծնգանց վրայ և պաչպչում էր, սպանուեցան։ Իբն Զոբէիրը, Մոհաղջիրների անդրանիկը, որ առաջին կերակրի տեղ ընդունեց Աստուծոյ առաքելի թուքը, սպանուեցաւ։ Առաջին հաւատացեալները Քեաբի չորս կողմով կուչ էկած՝ շարունակում են այնտեղ դեռ Աբրաբացւոց կեանքը, օրը անց կացնելով զրոյց անելով սրահումը և թաքուր տալով սեաւ քարի չորս կողմովը, բայց նրանք դառան ամենեին անզօր։ և Օմէադեանք յարգում են նրանց մինչև այն օրը միայն, երբ որ իրանք այնքան զօրանում են, որ կարողանում են նեղացնել նրանց իրանց տաճարի մէջ։ Օտարոտի դայթակղութիւն էլաւ Մէկքի այն վերջին պաշարումը, երբ որ Աստրի Մոհամմէդականները կրակ տուին Քեաբի նաւերը և կործանեցին նրան իրանց բալիստրի քարերով։ Ասում են, թէ ինչ ժամանակ որ առաջին քարը ձգեցին սրբազան տան ընդդէմ, սաստիկ որոտմունք լսուեցան, Աստրեստանի զինուորները դողացին։—Առաջ գնացէք, տաց նրանց առաջնորդը, ես ճանաչում եմ այս երկրի կլիմայն, մրրիկները յաճախ են այստեղ տարուս այս եղանակումը։ Այն ժամանակ նա ինքը բռնեց բալիստրի չուանները, սկսաւ բանացնել։

Այս ամէնից դուրս է դալի յետագայ հետևանքը, թէ Մոհամմէտական շարժողութիւնը յառաջ եկաւ գրեթէ առանց երկիւղած հաւատոյ, թէ բացի սակաւաթիւ նախկին հաւատացեալներից, Մոհամմէդը արդեամբ չատ քիչ մարդիկ համոզեց Այրաստանումը և թէ նրան չյաջողեցաւ երբէք յաղթել Օմէադեանց հակառակութեանը։ Այս այն միաբանութիւնն է, որ ճնշուած լինելով՝ առաջ առաջ Օմարի զօրութենից, յաղթող է հանդիսանում. վերջապէս այս հակառակորդի մահից յետոյ ստիպում է ընտրել Օսմանին. այս այն միաբանութիւնն է, որ դէմ է դնում Ալիին մի անյաղթելի հակառակութիւն և աւարտում է զոհելով Նրան իւր ատելութիւնը. այս այն միաբանութիւնն է, վերջապէս, որ ընդունում է յաղթական պրակը Օմէադեանց բարձրանալով և կոտորում է մինչի Քեաբը ամէնը, ինչ որ մնացել էր առաջին և ընտիր աղղից։ Ուստի և այն անորոշութիւնը, որի մէջ ծփում են մինչև ԺԲ. դարը Մոհամմէտական հաւատոյ ամէն վարդապետութիւնները, ուստի այն համարձակ փիլիսոփայութիւնը, որ քարոզում է անդարձ մտաց անսահման իրաւունքները, ուստի այն անթիւ աղանդները, որոնք մերձ էին կատարեալ անհաւատութեան, որք են Karmathes, Fatimites, Ismalliens, Dualistes, Druses, Haschischins, Hermanites, Zendiks. այն դաղտնի երկմիտ աղանդներն, որոնք մոլեկրօնութիւնը խառնում էին անհաւատութեան հետ, յանդգնութիւնը կրօնական էնթուզիազմի

հետ. ազատ մտածողի համարձակութիւնը նորընծայի ասլորդապաշտութեան հետ։ ԺԲ. դարումը միայն Իսլամը յաղթական հանդիսացաւ ամէն հակառակորդների վրայ։ Այս թուականից յետոյ ոչ մի երկրայութիւն յառաջ չէ եկել, ոչ մի բողոք չէ բարձրացել և ոչ երբէք գուցէ Իսլամը այնպէս զօրաւոր չէ էլած՝ ինչպէս սեր օրերումը։ Հաւատը ժամանակի գործ է և կրօնական չինուածների չաղախը քանի որ հնանում է, այնքան պնդանում։

Ես երկար խօսեցայ Իսլամի լինական տարութեան վրայ, ճշմարտութիւնը կպահանջէ ասել, թէ ոչինչ չի դիմանալ այն փորձին, որի տակը մենք կարող ենք ձգել նրան։ Ո՞ր մարդարէն կդիմանայ կրիտիկի ընդդէմ, եթէ կրիտիկան հալածում է նրան մինչև անդամ քնարանի մէջ։

Բաղաւորներ են նրանք, որոնց ծածկում է դաղտնի խորհուրդը և որոնք պատերազմում են կրիտիկի ընդդէմ ամպի քամակին կանգնած։

Իսլամի հիմնադրի գործերի մէջ աշխարհային բաները հաղորդելուց յետոյ, ես պիտի ցուցանեմ այժմ, թէ ինչով էր այս գործը սուրբ և օրինաւոր, այսինքն՝ թէ ինչով էր նա յարմարուում մարդկային բնութեան ամենախորին աղդեցութիւններին և մասնաւորաբար Արաբացոյ պիտոյքներին։ Դարումը։ Իսլամը երևում էր մինչև հիմայ պատմութեան մէջ, ինչպէս մի սկզբնական փորձ և սուանց նախընթացի։ Այս էր գրեթէ մի ձև հարկադրեալ յանդիման կացուցանել Մոհամմէդը իբրև քաղաքականութեան, միաստուածութեան և նաև Արաբացւոց գրականութեան հիմնադիր։ Շատ հեռի լինելով սկսել Մոհամմէդից, կարելի է ասել, որ Արաբացւոց հանճարը գտաւ նրա մէջ իւր վերջաբանութիւնը։ Ես չդիտեմ, թէ կայ արդեօք քաղաքականութեան բոլոր պատմութեան մէջ մի պատկեր առաւել շնորհալի, առաւել սիրելի, առաւել կենդանի քան թէ Արաբացւոց կեանքի պատկերը Իսլամից առաջ, այն կեանքի, որ երևում է մեզ Մաալլակաթի և մանաւանդ Անթարի զարմանալի օրինակի մէջ մարդու անսահման ազատութիւն, օրինաց և իշխանութեան կատարեալ բացակայութիւն, պատուի բարձր զգացողութիւն, կենդանի վրանաբնակ և ասպետական, գեղեցիկ զուարճախօսութիւն, զուարթութիւն, խորամանկութիւն, բանաստեղծութիւն թեթև և անեռանդն և սիրոյ նրբութիւն։ Արաբացւոց կեանքի այս գեղեցկութիւնը վերջանում է որոշակի Իսլամի գալով։ Վերջին երևելի բանաստեղծները աներևութանում են նորածին կրօնին ամենասաստիկ ընդդիմութիւն անելուց յետոյ։ Քսան տարի Մոհամմէդից յետոյ Արաբստանը նուաստացաւ և յետ մնաց յաղթական դաւառներից։ Հարիւր տարուց յետոյ Արաբացւոց ոգին կատարելապէս չնչուեցաւ. Պարսկաստանը յաղթական է հանդիսանում Խաչիկների գալստեամբ. Արաբստանը չքանում է յաւիտեան աշխարհի թատրոնից և երբ որ նրա լեզուն և կրօնը տանում են քաղաքականութիւնը Մողիզիոց մինչև Մա-

բօքը, Թանբուկթուից մինչև Սամարղանդը, նա մուտցած և քշած լինելով իւր անապատների մէջ, կրկին սատնում է իւր կեանքը ինչպէս Իսմայէլի ժամանակը։

Մօհամմէտը ոչ մի աստուածութեան, ոչ քաղաքականութեան և ոչ զրականութեան հիմնադիր չէ։ Երևում է բաղխթիւ գործերից, որ Մօհամմէտը հետևել է միայն իւր ժամանակի կրօնական շարժողութեան։ Միաստուածութիւնը, գերագոյն ալլահի պաշտօնը (Ալլահ Թաալահ), էլել է միշտ Արաբացւոց կրօնի հիմն։ Սեմեական ազգը երբէք չհասկացաւ տիեզերքի կառավարութիւնը այլազգ, քանթէ մի բացարձակ միապետութիւն։ Նրա Աստուածականը (Tysticisme) ոչինչ յաջողութիւն չէ արել Յովբայ գրքից յետոյ. բազմաստուածութիւնը միշտ օտար մնաց նրա համար։ Բայց մի քանի աւելորդապաշտ պաճուճանքներ, որոնք զանազանում էին ցեղը ցեղից, այլայլեցին Սրաբացւոց մէջ Նահապետական կրօնի անարատութիւնը և առաւել կատարեալ կրօններին հանդիպելով, Արաբատանի ամէն լուսաւորեալ մտքերը վարակեցին մի լաւագոյն աստուածպաշտութիւն։ Մի ազգ իւր կրօնի անցարմարութիւնը հասկանում է միայն այն ժամանակ, երբ որ կապակցութիւն ունի ուրիշ ազգի հետ և կրօնական ծագման ժամանակները հետևում են միշտ ցեղերի իրար հետ խառնութեան ժամանակներին։ Զ. դարումը Արաբատանը մնալով մինչև այն ժամանակ անմատչելի՝ բացւում է ամէն կողմից. Յունք, Պարսիկք, Ասորիք, Խաբշիկք մուտնում են այնտեղ միանգամայն։ Ասորիք բերում են դիրը, Խաբշիկք և Պարսիկք թագաւորում են այնտեղ մէկ զմէկից յետոյ։ Շատ ցեղեր Յունաց կայսրներին ճանաչում էին իրանց կալուածոց զլխաւոր տէր և ժառանգ և ընդունում էին նրանցից կուսակալ։ Արաբացւոց հին պատմութենից յայտնի է այն անցքը, որ պատահեցաւ Խոսրովբիայիս Իշխան բանաստեղծի հետ, որ գնաց Կոստանդնուպոլիս աղաստանարան խնդրելու համար, սիրահարուեցաւ գաղտնի սիրով Յուստինոսի դստեր վրայ՝ երգելով նրա գեղեցկութիւնը Արաբերէն ոտանաւորներով և մեռաւ մահադեղով Բիւզանդիոյ Դրան ծածուկ հրամանով։ Կրօնների տարբերութիւնը պահպանում էր նոյնպէս Արարիսմը կարծիքների մի առանձին շարժողութիւն։ Բոլոր ցեղերը ընդունում էին Հրէից օրէնքը, քրիստոնեայք ունէին երեքի եկեղեցիք Հիրայի և Ղասսանի տէրութիւններումը։ Ամէն կողմից կրօնի վրայ էին վիճում. Մեղ համար մնացել է մի արժանի հետաքրքրութեան յիշատակ այս հակառութիւններից, Գրեժանտիոս Զենարի Եպիսկոպոսի մէջ Հրէայ Հերբանի ընդդէմ։ Բոլոր Սեմեական ազանդների անորոշ թոյլատուութենից և միաբանութենից հաստատուեցան իդէայքը միաստուածութեան վրայ, ըրախտի, յարութեան, մարգարէների և սուրբ գրոց վրայ և կամաց կամաց ներս մտան նաև հեթանոս ցեղերի մէջ։ Բնական դառաւ համօրէն

դատանութիւնների տաճար։ Երբ որ Մօհամմէդը դուրս ձգեց պատկերները տաճարից, դուրս արաւ աստուածների մէջ կայր մի կոյս Բիւզանդացի քաշած մի սիւնի վրայ իւր որդին ձեռքերումը բռնած։

Կրօնների այս մեծ գործը մատնուում էր դուրսից նշանաւոր բաներով, որոնք որ դուշակում էին մի մօտաւոր եկք։ Շատ մարդիկ անբաւական լինելով՝ հին դատանութիւնով սկսան ճանապարհորդութիւն անել ուրիշ աւելի լաւ կրօն գտնելու, փորձելու կարգով զանազան դատանութիւնները և յոյսը կորած հնարելու իրանց համար սեպհական կրօն համեմատ իրանց բարոյական պիտոյքներին։ Ամէն կրօնական յայտնութիւնը առաջ է գնացել այսպէս մի սեսակ անհանդստութեամբ կամ անորոշ ակնկալութեամբ, որ երևում է մի քանի ընտրեալ հոգիների մէջ։ Իսլամը ունեցել է իւր Յովհաննէս Մկրիչը և իւր Սիմէոն ծերունին (*)։ Մի քանի տարի առաջ Մօհամմէդի քարոզութենից, մի օր երբ Կորէիշեանք կատարում էին իրանց կուռքերի մէկի տօնը, չորս մարդիկ ուրիշներից առաւել լուսաւորեալ քաջուեցան ժողովրդից մի կողմը և ծածուկ հաղորդեցին միմեանց իրանց միտքը։ «Մեր հայրենակիցները, ասում էին նրանք մէկ զմէկին, գնում են ծուռ ճանապարհով. նրանք հեռացել են Աբրահամի կրօնից։ Ո՞վ է այս սուտ աստուածութիւնը, ում որ նրանք մատաղներ են մորթում և որի չորս կողմով նրանք մեծաչուք հանդէսներ են կատարում,,։ Այս չորս անձինքն էին Վարագայ Նոֆալի որդին, Օսման Նուվայի որդին, Օբէիդալլահ Ջահսի որդին և Զէյդ ամրի որդին։

Վարագան քաղել էր իւր յաճախ խօսակցութենից քրիստոնեաների և Հրէաների հետ մի գերագոյն կրթութիւն քան թէ իւր քաղաքակիցների վարժումը։ Մի ընդհանրապէս տարածուած կարծիքի պատճառով, նա հաւատացած էր, թէ մի երկնային առաքեալ պիտի շուտով երևայ երկրի վրայ և թէ այս առաքեալը պիտի դուրս գայ Արաբացւոց ազգից. նա գիտէր Եբրայեցւոց լեզուն և կարդացած էր սուրբ գիրքը։ Լսելով իւր եղբօր աղջկանից Խադէջից նրա մարդու առաջին երազը, Վարագան հրատարակեց՝ թէ Արաբացւոց առաքեալն է Մօհամմէդը և դուշակեց այն հաղթութիւնները, որոնք որ նա կրելու էր։ Նա մեռաւ սակաւ ժամանակից յետոյ, մի քիչ սեռնելով միայն Խադէջի տրշաղոյսը։

Օսմանը՝ Հովայրիթի որդին, սկսաւ հեռի աշխարհներ մանել, հարցնելով ամենից, որոնցից որ յոյս ունէր լուսաւորուել։ Քրիստոնէական կրօնները չարժեցին նրա սիրտը Յիսուսի Քրիստոսի հաւատի համար։ Նա գնաց Կոստանդնուպոլսի Կայսեր դուռը, ուր և ընկաւ մկրտութիւնը։

Օբէիդալլահը՝ Ջահսի որդին անտուղ ջանքից յետոյ հասանել Աբ-

(*) Բուդիստութիւնը ևս Բուդդի ծննդեան հրաշալի նշանները տեսնելով, մի ճշնաւոր Հիմալայից դալիս Բաղիրա ընդունում է մանուկը իւր գիրկը։

բահամի կրօնին, մնաց երկբայութեան և տարակուսութեան մէջ, մինչև այն բոպէն, երբ Մօհամմէդը սկսաւ իւր քարոզութիւնը։ Նա կարծեց նախ խոստովանել Իսլամը ճշմարիտ կրօն, բայց չուտով հրաժարուեցաւ, իւր անձը սահմանաբար նուիրելով քրիստոնէական կրօնին։

Իսկ Զէիդը՝ Ամրի որդին, գնում էր Քեաբը և աղօթք էր անում Աստծուն, որ լուսաւորէ նրան։ Ցանում էին նրան մէջքը տաճարի պատին դէմ տրած՝ իւր անձը բարեպաշտ մտածութիւնների տուած, ուրանից արթնանում էր աղաղակելով. Ցէր, թէ որ գիտենայի՝ թէ ինչ կերպով ես ուզում դու երկրպագութիւն տալ քեզ և պաշտել, ես կենդանի դուէի քո կամքին, բայց չգիտեմ։ Ապա տարածուում էր՝ երեսը գետնին քսելով։ Ընդունելով ոչ Հրէից և ոչ Քրիստոնէից կարծիքները, Զէիդը հընարեց իւր համար մի առանձին կրօն, ջնջելով նմանել իւր կարծեցած Աբրահամի հաւատին։ Նա պաշտում էր Աստուծոյ միութիւնը, յարձակուում էր հրապարակով սուտ աստուածների վրայ, ասենաբանում էր ազգու խօսքերով մնապաշտ սովորութիւնների ընդդէմ։ Հալածուած իւր քաղաքակիցների ձեռքից, նա փախաւ գնաց դէպի Միջագետ և Ասորեստան. խորհուրդ հարցնելով ամէն տեղ կրօնական ուսմունքներին անձնատուր եղած մարդկանց՝ յուսալով գտնել վերստին նահապետական կրօնը։ Մի ուսեալ կրօնաւոր քրիստոնեայ, որի հետ բարեկամացել էր նա, յայտնեց նրան, թէ մի Արաբացի մարգարէ երևացել է, որ քարոզում է Աբրահամի հաւատը Մէկքումը։ Զէիդը շտապով ճանապարհ ընկաւ և գնաց լսել առաքեալին, բայց ըմբռնուեցաւ ճանապարհումը աւազակներից, տկլորուեցաւ և սպանուեցաւ։

Այսպէս ամէն կողմից յառաջագոյն զգում էին մի մեծ կրօնական նորոգութիւն, ամէն կողմից ասում էին՝ թէ Արաբստանի ժամանակը եկել հասել է։ Մարգարէութիւնն է ձեւ, որ հագնում են ամէն մեծ մեծ խռովութիւնները Սեմետեան ազգերի մէջ և մարգարէութիւնը ոչինչ է, ճշմարիտը ասել, բայց եթէ միաստուածութեան հարկաւոր հետեանքը։ Նախկին ժողովուրդները համարելով միշտ իրանց անձը անմիջական յարաբերութեան մէջ Աստուածութեան հետ և նայելով ֆիզիկական և բարոյական կարգերի երևելի և մեծամեծ դիպուածներին ինչպէս վերին էակների ուղիղ գործողութեան արդիւնք, երկու կերպով միայն կարողացան հասկանալ Աստուծոյ այս ներգործութիւնը արարածների կառավարութեան մէջ, կամ աստուածային զօրութիւնը մարմնանում է մարդկային կերպարանքի տակ, զորօրինակ Հնդիկ Ավաթարը, և կամ Աստուած ընտրում է ինքեան միջնորդ մի առանձնաշնորհ մահկանացու, այս է Նաբին կամ Սեմետեան մարգարէն և յիրաւի այնչափ հեռաւորութիւն կայ Աստծուց մինչև մարդը Սեմետեան վարդապետութեան մէջ, որ մինը միւսի հետ հաղորդակցութիւն կարող չէ ունենալ, բայց եթէ թարգմանի ձեռով։ Ասել թէ Արաբացին սկսել էր մտանել

մեծամեծ գործերի թուականի մէջ, կնշանակէ ուրեմն, թէ նա սկսել էր ունենալ իւր համար մարդարէ ինչպէս ուրիշ Սեմետեան ազգերը։ Շատ մարդիկ տեսնելով ժամանակի հասունութիւնը՝ կարծեցին կամ ուզեցին լինել զուշակեալ մարդարէ։ Մօհամմէդը մեծանում էր այս շարժողութեան մէջ։ Նրա ճանապարհորդութիւնները Ասորեստան, նրա յարաբերութիւնները քրիստոնեայ աբեղաների հետ և զուցէ նրա հօրեղբօր Վարազի անձնական ներգործութիւնը, որ այնչափ վարժ էր հրէական և քրիստոնէական գրերի մէջ, սորվեցրին նրան այն դարի ամէն կրօնական երկբայութիւնները։ Նա չգիտէր ոչ գրել և ոչ կարդալ, բայց Աստուածաշնչի պատմութիւնները մտել էին նրա գլխումը, սաստիկ ազդել էին նրան և մնալով նրա մտքումը անորոշ յիշատակների պէս, թողել էին ամէն աղատութիւնը նրա երևակայութեանը։ Ցանկմանութիւնը, որ տուին Մօհամմէդին Աստուածաշունչ գիրքը սպասելու համար, անտեղի է բոլորովին։ Մօհամմէդը ընդունում էր սուրբ գիրքն այնպէս, ինչպէս տալիս էին նրան և Ղուրանի պատմական մասը ոչինչ է, բայց եթէ Թալմուտի սանդութիւնների և անհաւատի աւետարանների, մանաւանդ մանկութեան աւետարանի ծնունդ։ Այս աւետարանը, որ շատ վաղ թարգմանուեցաւ Արաբերէն և որ պատահեցաւ միայն այս լեզուի մէջ, ստացել էր մեծ յարգ արևելեան հեռացած կողմերի քրիստոնեաների մէջ և համարեա թէ ջնջել էր կանոնականները։ Ստոյգ է որ այս պատմութիւններն էին Մօհամմէդի գործողութեան առաջի զօրաւոր միջոցներից մինը։ Նաղիրը՝ Հարիթի որդին, սկսում էր երբեմն նախանձաւորութիւն անել նրան. նա կացել էր Պարսկաստանում և գիտէր այս երկրի հին թագաւորների վիպասանութիւնները։ Երբ որ Մօհամմէդը, ժողովելով իւր մօտ լսողներին, պատմում էր նրանց նահապետների և մարգարէների կեանքը և ամբարիշտ ազգերի վրայ եկած աստուածային վրէժխնդրութեան օրինակները, Նաղիրը նրանից յետոյ սկսում էր ասել. ‘‘Լսեցէք այժմ ուրիշ բաներ, որոնք արժեն այն բաներին, որոնց վրայ Մօհամմէդը ձեզ հետ խօսեցաւ,,։ Նա պատմում էր այնուհետև առաջի զարմանալի բաներ Պարսից դիցաբանական պատմութենից, Ռուստէմ և Իսքանդար հերոսների տղամարդութեան հրաշալի գործերը, յետոյ հարցնում էր. ‘‘Մօհամմէդի զրոյցները աւելի գեղեցիկ են՝ թէ իմ պատմութիւնները։ Նա քարոզում է ձեզ հին վիպասանութիւնները, որոնք ժողովել է իրանից առաջի գիտուն մարդկանց բերանից, բայց ես ինքս եմ հաւաքել իմ ճանապարհորդութեան ժամանակը և գրել այս զրոյցները, որոնք ձեզ պատմում եմ,,։

Երկար ժամանակ Իսլամից առաջ, Արաբացիք սովորական էին իրանց յատուկ ծագումը բացատրելու համար, Հրէաների և քրիստոնեաների աւանդութիւնները։ Այն վիպասանութիւնը, որով Արաբացիք միաւորուում էին Իսմայէլի հետ, շատ յարգելի էր, ինչպէս ունող պատ-

մական արժանաւորութիւն և հաստատող Աստուածաշնչի պատմութիւնները։ Անկարելի է երկբայել, որ Աբրահամու, Յովբայ, Դաւթի և Սողոմոնի գրքերի համբաւները չկանգնին Արաբացւոց մէջ Ե. դարումը։ Հրէաները (գրագէտ մարդիկը) ունէին մինչև այն ժամանակ Սեմետեան ցեղի գիւանը և Արաբացիք խոստովանում էին յօժար կամօք նրանց գերազանցութիւնը հմտութեան մէջ։ Հրէաների գիրքը խօսում էր Արաբացւոց վրայ, ասլիս էր նրանց մի ազգաբանութիւն. այս բուսական էր, որ սրանք հաւատ էին ընծայել նրան. այսպէս գրի կախարդական զօրութիւնը պարզամիտ ազգերի վրայ և տպաւորութիւնը, որով նը-րանք ուզում էին կապել իրանց ծագումը առաւել քաղաքաւոր և հըմուտ ազգերի ծագման հետ։ Պատմում են, թէ այն ժամանակ՝ երբ որ Մօհամմէդը սկսաւ յայտնուել, Սէկքայիք առաքեցին պատգամաւորներ Մէքինայ խորհուրդ հարցնելու այս քաղաքի ռաբբիներից, թէ ինչ կարծիք պէտք է ունենալ նոր առաքելի վրայ։ Պատգամաւորները նկարագրելով վարդապետներին Մօհամմէդը և պատմելով նրանց նրա քարոզութիւնները ասացին. «դուք ուսեալ էք, կարդում էք գրեանք, ինչ էք կարծում այս մարդի վրայ»։ Վարդապետները պատասխան տուին. «հարցրէք նրան, ովքեր են անցեալ դարերի այն մանուկ մարդիկը, որոնց դիպուածն է մի հրաշք. ով է այն մարդը, որ հասաւ երկրի սահմաններին արևելից և արևմուտից. ինչ է հոգին. թէ որ նա պատասխան կտայ այս երեք հարցմունքին այս և այս տեսակ՝ կնշանակէ, որ նա ճշմարիտ մարգարէ է, թէ որ ուրիշ տեսակ պատասխան կտայ կամ թէ որ չկարողանայ պատասխան տալ՝ կնշանակէ, որ նա խաբեայ է։ Մօհամմէդը լուծեց առաջին աւելցուածը եօթն ննջողների հասարակած արևելեան պատմութեան միջոցով։ Երկրորդը՝ թուկարնայի առասպելական աշխարհակալի միջոցով, որ ոչ ով չէ, բայց միայն վիպասանական Աղէքսանդր Պսեւտո—Կայիսանի։ Իսկ երրորդի համար, նա պատասխանեց. «ահ, գուցէ ինչ որ կարելի է պատասխանել։ «հոգին է այնպիսի բան, որոյ ճանաչելը պատկանում է Աստծուն։ Նա տուել է մարդուն ժառանգել գիտութեան թոյլ մասը միայն»։

Իսլամի վարդապետական մասը յառաջ է բերում առաւել սակաւ ընտրութիւն քան թէ պատմական մասը։ Մօհամմէդը ամենեին զուրկ էր գիտից այս մասին։ Օտար խորհրդաւոր աստուածպաշտութեան նրբութիւններից նա կարողացաւ միայն հիմնել մի պարզ և չափաւոր հրան ամէն կողմից մօտ ընդանուր կարծիքին, երկչոտ ինչպէս այն ամէնը՝ որ ծնում է մտածութենից, նեղ՝ ինչպէս ամէն բանը՝ որ ներգործական զգայութեան ենթակայ է։

Իսլամի հանդանակը զոնեա Պարսկական նրբութիւնների արշաւանքից առաջ, հաղիւ թէ յիշում է բնական կրօնի ամենապարզ բաները։ Ոչինչ աստուածաբանական պահանջողութիւն, ոչինչ այն գերբնական

նորահնար համարձակ խմաստներից (paradoxe), ուր որ յաւետենականութեան հպատակ աղգերի երևակայութիւնը այնչափ այլանդակութեամբ տարածում է իր թեները. ոչ քահանայութիւն, ոչ երկրպագութիւն բացի աղօթքից։ Քեաբի ամէն արարողութիւնները, ուխտագնացութիւնը, մատաղները Մինայի ձորի մէջ, Արաֆատ սարի անառակութիւնը (le débordement) մանրամասնաբար կարգադրած էին Մօհամմէդից երկար ժամանակ առաջ։ Ուխտագնացութիւնը մանաւանդ չատ հին ժամանակից Արաբացւոց կեանքի գլխաւոր նիւթն էր, ինչպէս Ոլիմպիական խաղարկութիւնները Յունաստանի համար։ Այսպէս Մէկքի ձորը Արաբստանի միջակէտ էր դառել և չնայելով ցեղերի անհամաձայնութեանը և նախանձաւորութեանը, այն գերդաստանի վանահայրութիւնը, որ պահպանում էր Քեաբան, ընդունուած էր լռութեամբ։ Երևելի էր այն բոպէն և որ գրեթէ թուական է համարուում Արաբացւոց պատմութեան մէջ, երբ որ տաճարը կողպեցին վիսանքով։ Սկսած այն ժամանակից իշխանութիւնը կապուեցաւ Քեաբայի բանալիքների ժառանգութեան հետ։ Կորէյշեան Կոսսան, հարբացնելով Ֆոզայեան Աբուդօբշանին, (բանալիքների պահպանին) գնեց նրանից բանալիքները, ասում է պատմութիւնը; մի տիկ գինով և հիմնեց այսպէս իւր ցեղի գահերեցական իշխանութիւնը։ Այս ժամանակից սկսանում է Արաբացւոց ցեղի կարգաւորութեան (organisation) մեծ շարժողութիւնը։ Մինչև այս ժամանակ համարձակուում էին միայն վրաններ կանգնելը բազան ձորումը. Կոսսայն ժողովեց ամ՝ Կորէյշներին, վերստին չինեց Քեաբան և դառաւ Մէկքայ քաղաքի ճշմարիտ հիմնադիրը։ Ամէն երեւելի սահմանադրութիւնները սկսանում են Կոսսայից. Նաղվա կամ կենդրոնական ժողովը Մէկքումը, շիվա կամ դրօշակը, ոիֆադայ կամ տուրքը ուխտաւորների ծախսը վճարելու համար, սիքայայ կամ ջրերի վերակացութիւնը, որ այն կողմերի գլխաւոր հարկն է, նաղա կամ նահանջ օրերի յաւելումը օրացոյցի մէջ, Հիղժաբայ կամ Քեաբայի բանալիքների պահպանութիւնը։ Այս պաշտօնները, որոնք համառօտ երկրորդում են Արաբստանի ամէն պօլիտիքական և կրօնական օրինաղրութիւնները, տուած էին անարգել Կորէյշներին։ Այսպէս սկսած Ե. դարի կիսից Արաբստանի կենդրոնական իշխանութեան սերմը ձգած էր արդէն և կէաը, ուրտեղից որ պիտի ծաղէին այս աշխարհի կրօնական և պօլիտիքական ուղղութիւնները, նշանակուած էր յառաջագոյն։ Կոսսայն մէկ մտքով աւելի չատ բաներ չինեց քան թէ Մօհամմէդը։ Նա մի տեսակ մարգարէ ևս համարուեցաւ։

Հաշէմը Զ. դարու առաջին կիսի մէջ լրացրուց Կոսսայի գործը և ընդարձակեց զարմանալի կերպով իւր ցեղի առևտրական յարաբերութիւնները. նա կարդեց երկու կարաւաններ, մինը ձմեռուան Եմանի համար, միւսն ամառուան Աստրեստանի համար։ Արդէ—Սեթալիբը Հա-

չմի որդին և Մոհամմէդի պապը շարունակեց Կորէյշեանց աւանդութեան գործը, բանալով Զէմզեմի ջրհորը (*)։ Զէմզեմի ջրհորը մի ցամաք հովտի մէջ, ուր որ Մէկքայի հովտի պէս ժողովուրդը գնում էր միշտ, մի գլխաւոր կէտ էր և հաստատում էր այն ցեղի դերազանցութիւնը, որ սեպհականել էր իրան։ Այսպէս Կորէյշեան ցեղը բարձրացած էր, ինչպէս Յուդայի ցեղը Եբրայեցւոց մէջ, մինչև առանձնաշնորհ ցեղի կարգը, որ սահմանուած էր իրագործել ազգի միութիւնը։ Մոհամմէդն աւարտեց միայն իւր նախնեաց գործը. ոչ քաղաքավարութեան, ոչ կրօնի մէջ նա ոչինչ չստեղծեց նոր, բայց նա իրագործեց ազդոզաբար իւր դարի փափաքը։ Մնում է քննել, թէ ինչ հնարներ գտաւ նա մարդկային բնութեան յատկենական ազդեցութեան մէջ և ինչպէս մարդկային սրտի տկարութիւններին ապաւինելով, նա կարողացաւ տալ իւր գործին այնպիսի հաստատուն հիմք, որ երբէք չէ էլած։

Անկախ կրօնի վարդապետութեան ամէն կարծիքից, կան մեր մէջը կրօնական կարօտութիւններ, որոնցից նաև անհաւատութիւնը չէ կարողանում հեռացնել մեզ։ Զարմանում են երբեմն, թէ մի կրօն կարողանում է ապրել այնչափ երկար ժամանակ նրա վարդապետութիւնների հիմը կրիտիկի ձեռով փորուելուց յետոյ. բայց իրօք կրօնը ոչ հիմնուում է և ոչ քանդուում է մտածութենից. նա ունի իւր պատճառը լինիլ մեր բնութեան ամենահարկաւոր կարօտութիւնների մէջ, որք են կարօտութիւն սիրոյ, կարօտութիւն համբերութեան, կարօտութիւն հաւատոյ։ Ահա պատճառը, որ ամէն կրօնական հիմնարկութիւնների ներգործական նիւթը լինում է կինը։ Քրիստոնէութիւնը հիմնադրուեցաւ, ինչպէս յայտնի է՝ կանանց ձեռքով։ Իսլամը, որ ոչ է ճշդիւ սուրբ կրօն, այլ բնական, ծանրաբարոյ, ազատ, մի բառով մարդկանց կրօն, ոչինչ համեմատութիւն չունի Մաղելենի, Թէկլի սքանչելի օրինակների հետ. բայց այս ցուրտ և բանական կրօնն ևս ունեցել է բաւական պատրանք աստուածապաշտ կինը կախարդելու համար։ Սուտ է այն կարծիքը առ հասարակ տարածուած արևմտեան աշխարհներումը կանանց վիճակի մասին, որով մեղադրում են Իսլամը. Արաբացի կինը Մոհամմէդի ժամանակում նման չէր ամենևին այն անզգայ կնոջ, որ բնակվում է Օսմանեան կանանոցումը։ Ստոյգ է, առ հասարակ Արաբացիք ունէին վատ կարծիք կնոջ բարոյական որպիսութիւնների վրայ, պատճառն որ կնոջ բնաւորութիւնը արդարև հակառակ է այն ակնարկութեան, որ ունէին կատարեալ այր մարդու համար։ Քիթաբ—էլ—Ագհանի մէջ գրած է, թէ Ժաչքորի ցեղի մի պատանի առաջնորդ, Սոջամռաջի անունով մի արշաւանքի մէջ թէմիմիթեանց ընդդէմ, յափշտակելով մի գեղահաս աղջիկ ազնիւ գերդաստանից, նորահաս աղ-

(1) Այս աղբիւրը ըստ վիպասանութեան Արաբացւոց, բղխեցրուց Աստուած Իսմայելի ծարաւը շիջուցանելու համար։

ջիկայ հօրեղբայր Կայիսը՝ Ասիմի որդին, գնաց յետ ուղել նրան Մոջամռատժից, խոստանալով նրան թափելու զինն։ Մոջամռատժը գերի օրիորդի կամքին թողեց մնալ նրա մօտ կամ յետ դառնալ տունը։ Նորահաս աղջիկը՝ որ սիրահարուել էր իւր յափշտակողի վրայ, նրան ընտրեց առաւել քան թէ իւր ծնողաց։ Կայիսը յետ դարձաւ իւր տուն այնքան չուարած և բարկացած կանանց ցեղի տկարութեան վրայ այսպիսի ընտրութիւն առնելու համար, որ խլոյն հրամայեց կենդանոյն թաղել իր երկու կրտսեր աղջկերքը և երդուեց, որ նոյնպէս վարուի ամէն աղջկերանց հետ, որոնք կծնանին ապագայ ժամանակում։ Այս պարզ և օրինաւոր բնութիւնները չէին կարողանում հասկանալ նէրը, որ վառուում էր կին մարդու սրտումը։ Բայց կային կանայք ինքնիշխան, որ վայելում էին իրանք իրանց կայքը, ընտրում էին իրանք իրանց համար մարդ և ունէին իրաւունք արձակել նրան, երբ որ իրանք կամենում էին։ Շատերը երևելի էին իրանց բանաստեղծական քանքարով և գրականական ճաշակով։ Կին չէր զեղեցիկն էլ— Կնդան, որ վիճաբանում էր փառքով մեծ դարի առաւել անուանի բանաստեղծների ընդդէմ։ Ուրիշները իրանց տանից տեսութիւն էին գնում զիտուն և իմաստուն մարդկանց։

Մոհամմէդը բարձրացնելով առաւել ևս կանանց վիճակը, որոնց չբնաղ գեղեցկութիւնը չարժում էր նրան այնչափ ազդու, արժանի է շնորհակալութեան։ Կանանց համակրութիւնը սակաւ գործակից չէլաւ նրան մխիթարելու իւր առաքելութեան առաջին ժամանակներումն այն նախատինքներից, որ կրում էր. նրանք տեսնում էին նրան հալածուած և սիրում էին։ Իսլամի առաջին դարը յառաջ է բերում ստուգիւ երևելի կանանց չատ բնաւորութիւններ։ Օմարից և Ալիուց, այն մեծ դարի երկու գլխաւոր անձանց յետոյ են երկու կանայքը, Այիշան և Ֆաթիման։ Փառքի բերկրական պսակը փայլում է Կաղիջի չորս կողմով և ճշմարիտ որ փառաւոր վկայութիւն է Մոհամմէդի համար, որ նրա աստուածային առաքելութիւնը նախ և առաջ վկայեց և ընդունեց այն կինը, որ կարող էր ամենից լաւ գիտել նրա թուլութիւնները։ Երբ որ իւր քարոզութեան սկզբում, ամբաստանեալ ստութեան մէջ և ծաղր արած՝ պատմում էր նրան իւր նեղութիւնները, նա մխիթարում էր նրան իւր քաղցր և քնքուշ խօսքերով, քաջալերում էր և զօրացնում էր նրա տատանեալ հաւատը։ Վատնորոյ Մոհամմէդը որոշում էր միշտ Կաղիջին իւր միւս կանայքներից։ Պատմում են, թէ նրա յաջորդներից մինը, Նախանձաւոր այս հաստատութեան վրայ, հարցրեց նրան, թէ Աստուած հրամայել չէ նրան մոռանալ պառաւ Կաղիջին. —ոչ, պատասխանեց նա. երբ ես աղքատ էի, նա հարստացրուց ինձ, երբ որ ուրիշները ամբաստանում ինձ ստութեան մէջ, նա հաւատաց ինձ, երբ որ անիծում էր իմ ազգը, նա մնաց ինձ հաւատարիմ. քանի որ

ես չարչարուում էի, այնքան առաւել սիրում էր նա ինձ։ Այնուհետև, երբ որ նրա կանայքներից մինը կամենում էր նրա բարի շնորհքը վայելել, նա սկսանում էր դուել Կաղիջին։ Կրօնի փորձաքարը կանանց յետոյ, են նահատակները։ Հալածումն իրաւի որ է կրօնական բերկրութիւններից առաջինը. այնչափ քաղցր է մարդոյ սրտին չարչարուել իւր հաւատի համար, որ այս հրապոյրը բաւական է երբեմն նրան, որ հաւատայ։ Այս է, որ հրաշապէս հաստատեաւ քրիստոնէական խղճմտանքը յառաջ բերելով այն հրաշալի վիպասանութիւնը, ուր որ այնչափ դարձեր կատարուեցան տանջանքի հրապուրով։ Խլամը՝ թէև մնաց օտար այս խորին զգայութիւններին, բայց հասաւ երբեմն, իւր մարտիրոսութեան պատմութիւնների մէջ դեղեցիկ հոգեբանութեան գծագրութիւններին։ Ցառայն՝ Բէլալն չհանուեցաւ ոսկեղօծ վիպասանութեան սրտառուչ հերոսների միջից։ Մահամմէդականաց աչքումը ճշմարիտ նահատակները նրանք են, որոնք անկան պատերազմելով ուղիղ հաւատի համար։ Թէպէտ մտաց խառնակութիւն է այս, որ անհաճոյ է մեզ, ըստ որում զինուորի մահը ուրիշ է, նահատակինը ուրիշ, բայց Մահամմէդական բնութիւնը չրջապատել է իւր մեռելները բարձրագոյն բանաստեղծութեամբ։ Դեղեցիկ և մեծ տեսարան է, ինչպէս այն թաղման հանդէսը, որ կատարուեցաւ Օհօտի պատերազմից յետոյ։ Թաղեցէք նրանց առանց լուանալու նրանց արիւնը, կոչում էր Մահամմէդը. նրանք կերևին յարութեան օրը իրանց արիւնայից վէրքերով, որոնք կլուրեն մշկի հոտ և ես կվկայեմ, որ նրանք մեռան, ինչպէս հաւատի նահատակներ։ Զիաւորների դրօշակիր Զաֆիրը, երկու ձեռները կտրած՝ ընկաւ իննսուն վէրքերով վիրաւորուած, ամէնը ստացած առաջի կողմից։ Մահամմէդը տարաւ այս համբաւը նրա այրի կնոջ։ Նա առնում է իւր ծնկների վրայ նահատակի մանուկ որդուն, զգուում է զլուխն այն կերպով, որ ամէն բան լմաց է անում մօրը։ Նրա երկու ձեռները կտրատուեցան, ասում է նա, բայց նրանց փոխարէն Աստուած տուեց նրան երկու զմրուխտեայ թևեր, որոնցով թռչում է նա այժմ ամէն տեղ ուր որ կամենում է դրախտի հրեշտակների մէջ։

Դարձերը նոյնպէս կատարուել են շատ հասարակ մեծ արուեստով։ Համարեա թէ ամէն դարձերը յղացել են սուրբ Պօղոսի դարձի պէս։ Հալածողը դառնում է առաքեալ. զոհը հասած իւր բարկութեան ծայրագոյն աստիճանին, ընդունում է վերջին հարուածը, որ տարածում է նրան յաղթական շնորհաց ոտի տակ։ Օմարի դարձի պատմութիւնը այս մասին է կրօնական հոգեբանութեան մի անման օրինակ։ Օմարը Մահամմէդականների առաւել սաստիկ թշնամին էր։ Նրա ահեղ և կատաղի բնութիւնը չինել էր նրան հրէշ, որ երկիւղ էր ձգում հաւատացեալներին դեռևս երկչոտ և թագչող։ Մէկ օր բարկութեան բոլէի մէջ դուրս եկաւ նա հաստատ մտքով սպանել Մահամմէդին։ Նա պատահում

է ճանապարհին Նօայիմին՝ իւր ազգակիցների մինին, որ տեսնելով նրան այսպէս թուրը ձեռին, հարցնում է, թէ ուր է գնում և ինչ է ուզում անել։ Օմարը յայտնում է նրան իւր դիտաւորութիւնը։ Կիրքը յաղթում է քեզ, ասեց Նօայիմը։ Ինչու մտածում չես առաւել տալ խրատ քո գերդաստանի անդամներին, որոնք ուրացել են քեզնից ծածուկ քո հայրերի հաւատը։ Իմ գերդաստանի այդ անդամներն ովքեր են, ասում է Օմարը։ Քո քեռայր Զայիդը և քո քոյր Ֆաթիմը, պատասխանեց Նօայիմը։ Օմարը թռչում է իւր քրոջ տուն։ Զայիդը և Ֆաթման լսում էին այն բոլէին մի աշակերտի ծածուկ վարդապետութիւնը, որ կարդում էր նրանց համար Ղորանից մին զլուխ մաղաղաթի վրայ գրած։ Օմարի ոտի ձայնից Մահամմէդական կրօնի վարդապետը թաք կացաւ մի առանձին մութ տեղում, Ֆաթման սլքացրուց Ղորանի թերթը իւր շորերի տակ։ —Այդ ինչ էիք սաղմոսում ցած ձայնով ասեց Օմարը։ —Ոչինչ, դու սխալուեցար։ —Դուք բան էիք կարդում և ես լսեցի, որ դուք որդեկիր էք դառել Մահամմէդի աղանդին։ Այս խօսքը ասեց թէ չէ, Օմարը յարձակուեցաւ իւր քեռայրի վրայ։ Ֆաթման ուզում է ծածկել նրան իւր մարմնով և երկոքեան գոչեցին։ —Այո, մենք Մահամմէդական ենք։ Մենք հաւատում ենք Աստծուն և նրա մարգարէին։ Մորթէ մեզ, թէ կամենում ես։ Օմարը կուրացած՝ վրայ ընկաւ և վիրաւորեց սաստիկ իւր քոյր Ֆաթիմին։ Իւր ձեռով վիթած կնոջ արեան վրայ տեսութենից, կատաղի պատանին հանդարտեցաւ խսկոյն։ — Ցուցէք ինձ գրուածը, որ դուք կարդում էիք, ասաց նա հանդարտ ձայնով։ — Ես վախում եմ, պատասխանում է Ֆաթմէն, որ դու նրան չպատռես։ Օմարը երդուում է յետ դարձնել անարատ։ Այն ինչ կարդաց նա առաջին տողերը, —Այս ինչ գեղեցիկ է, այս ինչ վսեմ է, աղաղակեց նա. ցոյց տուէք ինձ ուր է մարգարէն, ես խսկոյն անձնատուր կլինիմ նրան։ Մահամմէդը գտնուում էր այն բոլէին Սաֆայ բլրի վրայ չինած մի տան քառասուն աշակերտներով, որոնց մեկնում էր իւր վարդապետութիւնները։ Դուռը թակում են։ Մահամմէդականներից մինը մտիկ է տալիս ճեղքուածովը. —Օմարն է թուրը մօտին, ասաց նա ահ ու դողով։ Սարսափն էլաւ ընդհանուր։ Մահամմէդը հրամայում է, որ դուռը բաց անեն. նա յառաջ է գնում դէպի Օմարը. բռնում է նրա փէշից և քարշելով ժողովի մէջ տեղ, ասում է նրան. ինչ պատճառով ես եկել, Քհաթաբի որդի։ Կմնաս, կկենաս արդեօք հաստատուն քո ամբարշտութեան մէջ, մինչև երկնքի պատիժը ընկնի քո վրայ։ — Ես եկել եմ, ասաց Օմարը, յայտնել, թէ ես հաւատում եմ Աստծուն և նրա մարգարէին։ Բոլոր ժողովը գոհութիւն է տալի արարչին այս անակնկալելի դարձի վրայ։

Օմարը հաւատացեալներից դուրս եկաւ և գնաց մի Ջամիլ անուն մարդու տուն, որ համարուում էր Մէկքի չառաքեալներից աւելի մեծ։

Ջամիլ, ասաց նրան Օմարը, լսիր նոր համբաւ. ես Մոհամմէդական եմ, ես ընկալայ Մոհամմէդի կրօնը։ Ջամիլը չոռապով վազեցաւ գնաց Քեաբի սրահը, ուր որ Կորէյշեանք անց էին կացնում օրը խօսակցութեան մէջ։ Նա եկաւ գոչելով բարձրաձայն։ Քհաթաբի որդին մոլորուել է։ —Սուտ ես ասում, ասաց Օմարը, որ գալիս էր նրա քամակից. ես չեմ ամենևին մոլորուել, ես Մոհամմէդական եմ. ես խոստովանում եմ, թէ ուրիշ Աստուած չկայ բացի Ալլահից և թէ Մոհամմէդն է նրա մարգարէն։ Այս զրոյցները վերջացան կռապաշտները կատաղացնելով, որոնք յարձակուեցան նրա վրայ։ Օմարը ստացաւ հարուածը և ցըրուելով յարձակողները. —Աստուած իմ, կոչեց նա, եթէ լինէինք մենք դոնեա երեք հարիւր Մոհամմէդականներ, մենք կտեսնէինք, թէ ով կլի նէր այս տաճարի տէրը։ Սոյն այս մարդն, որ մի ժամանակից յետոյ չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է դաշն դնել անհաւատացեալների հետ և որ դուրս գալով սուրը ձեռին տանից, ուր որ Մոհամմէդը փչել էր իւր հոգին՝ հրատարակեց, որ կՀարդէ այն մարդու գլուխը, ով որ կհամարձակուի ասել, թէ մարգարէն մեռաւ։

Վերջապէս Մոհամմէդը իւր զարմանալի Լստէտիքական ճաշակով ամենակարող ներգործութիւն արար դեղեցիկ լեզուի թուլութիւնը անչափ զգացող Արաբացւոց վրայ։ Ղորանը դառաւ մէկ մտքով գրականական և կրօնական չրՀան միանգամայն. նա նշանակում է Արաբացւոց անցանելն ոտանաւոր ոճից դէպի արձակ չարադրութիւնը, բանաստեղծութենից դէպի ճարտասանութիւնը, որ է այնչափ կրեկի՞ դրպէ ազգի խմացական կեանքումը։ Է. դարի սկզբումը Արաբստանի բանաստեղծական մեծ ծնունդը ընկնում էր. խոնջութեան հետքերը երևում էին ամէն կողմից։ Անթարն այս Արաբացի աղատ և այնչափ անփոփոխ բնութիւնը սկսանում է իւր Մօալլաքաթը գրեթէ որպէս առնում է մի ընկած Լատին բանաստեղծ այս բառերով. «Ի առարկայ բանաստեղծները չեն երգել։ Մեծ տպաւորութիւն ներգործեց, երբ որ Մոհամմէդը երևեցաւ այս անհամ միջոցին իւր կենդանի և ստիպող խօսքերով։ Առաջին անգամ, որ Օրբան՝ Ռեբիաա որդին լսեց այս աղդողական քաղցրաձայն և չափաբերական բ[illegible]ատը, յետ դարձաւ նա իւրերի մօտ՝ ամենևին չդարմացած։ —Ինչ համբաւ կայ, հարցրին նրան։ —Իմ հաւատը, պատասխանեց նա, Մոհամմէդը խօսեցաւ ինձ հետ այնպիսի լեզուով, որ ես երբէք լսած չէի։ Այն ոչ ոտանաւոր է, ոչ արձակ խօսակցութիւն և ոչ մոգական լեզու, այլ մի թափանցող բան։ Մոհամմէդը սիրում չէր Արաբացւոց բանաստեղծութեան առոդանութիւնը, նա չափի սխալմունքներ է անում ոտանաւոր ասելիս և Աստուած ինքը իւր վրին դրաւ նրա տգիտութեան մեղը Ղորանի մէջ. «Մենք ուսուցել չենք տաղաչափութիւն մեր մարգարէին,,։ Նա կրկնում է միշտ, թէ ինքը ոչ բանաստեղծ է և ոչ մոգ. ոամիկները, ը-

տոյգ է, փորձում էին անդադար, խառնել նրան այս երկու դասերի մարդկանց հետ և ճշմարիտ է, որ նոյնավերջ և խոհական ոճն ունէր փոքր ինչ նմանութիւն մոգերի ոճի հետ։ Ստոյգ է, անկարելի է մեզ Ղորանը կարդալով՝ հասկանալ այժմեան ճարտասանութեան այնչափ զօրաւոր գեղեցկութիւնը։ Այս գիրը թուում է մեզ ատենաբանական, նոյնաձայն, ձանձրացուցիչ. նրա անընդհատ ընթերցանութիւնը համարեա թէ անտանելի է, բայց պէտք է յիշել, որ չունենալով երբէք ոչինչ իդէայ, ոչ փլաստիքական արուեստների վրայ, ոչ չարադրութեան մեծամեծ գեղեցկութիւնների վրայ, Մոհամմէդը հաստատ պահեց միայն ոճի կատարելութիւնը։ Լեզուն նրա աչքումը մի աստուածային բան է. առաւել թանդագին պարգևը, որ Աստուած տուեց Արաբացւոց ցեղին, նրա գերազանցութեան առաւել ստոյգ նշանը, նոյն ինքն Արաբացւոց լեզուն է իւր ուսումնական քերականութեամբ, իւր անսահման հարստութեամբ, իւր նուրբ փափկութեամբ։ Կարող չէին երկբայել, որ Մոհամմէդը պարտական չլինի իւր զլուխոր յաջողութիւնները, իւր լեզուի անմանութեան և այն նոր ընթացքին, որ տալիս էր նա Արաբացւոց ճարտասանութեան։ Առաւել նշանաւոր դարձը, զորօրինակ Լէպիդ բանաստեղծի դարձը, կատարուում են Ղորանի յայտնի հատուածների ընթերցանութեան միջոցով և ով որ Մոհամմէդից նշան կամ հրաշք է պահանջում, նա ուրիշ պատասխան չէ դնում առջև, բայց եթէ իւր խօսած Արաբի լեզուի կատարեալ մաքրութիւնը և նոր ոճի թուլչութիւնը, որի գաղտնիքը նրա մօտ էր։

Այսպէս Իսլամը երկրորդում է համառօտ բարոյական, կրօնական և էսթէտիքական իդէայների բովանդակութիւնը. մէկ խօսքով մարդկութեան մեծ գերդաստանի կեանքը և խելքը։ Չէ կարելի նրանից պահանջել ոչ այն բարձր աննիլթականութիւնը, որ միայն Հնդկաստանը և Գերմանիան ճանաչեցին, ոչ այն ճարտարարուեստութիւնը, այսինքն՝ չափի և կատարեալ գեղեցկութեան զգացողութիւնը, որ Յունաստանը կտակ արաւ Նորալատին ցեղերին, ոչ այն թուլչական, հրաշալի, խորհրդաւոր և արդարև աստուածային պարգևը, որ ժողովից ի միասին բոլոր կրթած ազգերի առանց զանազանութեան մի և նոյն իդէալի յարգութեան մէջ։ Անկարելի է հաւասար համարել մարդկային բնութեան բոլոր ծնունդները և գեղեցկութեան սանդուղքի մի և նոյն աստիճանի վրայ դնել Հնդկաց մեհեանը և Յունաց տաճարը, նրա համար, որ նրանք հաւասարապէս, տարօրինակ և աղատ յղութեան ծնունդ են։ Մարդկային բնութիւնը գեղեցիկ է միշտ, ճշմարիտ է, բայց ոչ հաւասարապէս գեղեցիկ։ Երգերի եղանակը միշտ մի և նոյն, երկրային և աստուածային բնական աղդմունքների ներդաշնակցութիւնները և անհամաձայնութիւնները մի և նոյն, բայց ձայների ոչ լուութիւնն է մի և նոյն, ոչ քաղցրութիւնը։ Իսլամը յայտնապէս՝ է մարդկային ստորին

ծնունդ։ Ահա պատճառը, որ նա տիրող չէր։ բայց եթէ միջին վիճակի մարդկութեան վրայ։ Վայրենի ցեղերը չկարողացան հասանել նրան և միւս կողմից նա չկարողացաւ բուսական լինիլ այն ազգերից, որոնք ունէին իրանց մէջ ամենահզօր քաղաքավարութեան սերմը։ Պարսկաստանը, միմիայն Հնդկա—Եւրոպական երկիրը, որին որ նա բացարձակապէս տիրեց, ընդունեց նրան միայն պահանջելով նրանից յարմարութիւն իւր այլաբանական և առասպելական հակամիտութիւնների հետ։ Բայց Իսլամի յառաջադիմութիւնները երկար ժամանակից յետոյ դադարուեցան և այսուհետև կորցրեց նա իւր ամէն դարձուցանող զօրութիւնը։ Թէ որ հարցանեն, թէ ինչ վիճակի մէջ կընկնի նա Եւրոպական քաղաքավարութեան տարածուելուց առաջ, պէտք է խոստովանել, որ այժմ դեռ անկարելի է կորական բան ասել՝ թէ ինչ կերպով կկատարուի այս անչափ փոփոխութիւնը։ Մի կողմից, ստոյգ է, որ թէ Իսլամը մի ժամանակ ասում չեմ չքանայ, որովհետև կրօնները չեն մեռանում, այլ կորցնէ աշխարհի մի երեսի մասի իմացական և բարոյական ուղղութիւնը, նա կճնշուի ոչ թէ ուրիշ կրօնի զօրութեան տակ, այլ այժմեան գիտութիւնների հարուածի տակ, որոնք բերում են իրանց հետը իրանց մտաւոր դատողութեան և կրիտիկի սովորութիւնները։ Միւս կողմից պիտոյ է յիշել, որ Իսլամը զանազան լինելով այն գոռոզ աշակերտներից, որոնք դիմանում են մրրկի ընդդէմ և ընկնում են թնդանօթից, ունի նաև իւր դիւրակորութեան մէջ ընդդիմութեան ծածուկ զօրութիւններ։ Քրիստոնէական ազգերը իրանց կրօնական բարեկարգութիւնը կատարելու համար, ստիպուեցան խորտակել սաստիկ իրանց միութիւնը և հաստատուել յայտնի խառնութեան մէջ կենդրոնական իշխանութեան հետ։ Իսլամը, որ չունի ոչ պապ, ոչ ժողովներ, ոչ աստուածադիր եպիսկոպոսներ, ոչ սահմանած կղերի. Իսլամը, որ չէ երբէք չափել անսխալութեան ահաւորանդուղքը, դրեթէ չատ չէ երկնչում մտաց դատողութեան զարթնելուց։ Եւ յիրաւի, ինչ բանին պիտի դիմէլ կրիտիկան։ Մոհամմէդի վիպասանութեանը։ Այս վիպասանութիւնը առաւել հաստատութիւն չունի քան թէ այն բարեպաշտ կարծիքները, որոնց Կաթոլիկ դաւանութեան ծոցումը կարելի է մերժել առանց հերետիկոս լինելու։ Հաւատոյ վարդապետութեանը։ Հնազանդ իւր իսկական դծերին, Իսլամը ոչինչ չէ աւելացնում բնական կրօնին, բայց Մոհամմէդի մարգարէութիւնը և ճակատագրութեան ընդունելութիւնը որ չէ հաւատոյ մասը։ Բարոյականութեանը։ Ուրիշ ուղղափառ դաւանութիւնների մէջ ևս բարոյականութիւնը ազատ է։ Իսկ աստուածպաշտութեան համար, բացի մի քանի յաւելուած մնապաշտութիւններից, նա կարող է միայն համեմատուել իւր պարզութեան մասին Պրոտէստանդական սրբած աղանդներին։ Մինչ չտեսան այս դարու սկզբումը, Մոհամմէդի նոյն իսկ հայրենիքումը, մի աղանդաւոր, որ

գրգռեց Վահրիթների պօլիտիքական և կրօնական ընդարձակ չարժումը, որոնց վիճակը դեռ ևս աւարտուել չէ, հրատարակելով թէ ճշմարիտ աստուածպաշտութիւնը բաղկանում է ուղղակի Աստծուն երկրպագութեան մէջ, թէ ամէն միջնորդ կամ բարեխօս կոչելը նրա մօտ կռապաշտութիւն է, և թէ արժանաւոր գործ կլինէր քանդել մարգարէի գերեզմանը և խանձեր հոյակապ շիրիմները։

Առաւել իմաստուն բնութեան նշանները յայտնուում են Եգիպտոսի և Տաճկաստանի մէջ։ Այնտեղ Եւրոպական գիտութիւնների և բարքուվարքի չօշափումը յառաջ բերեց հաւատի մի աղատութիւն, որ երբէք չկար։ Ջերմեռանդ հաւատացեալները, որոնք երկիւղ են կրում, չեն թաղցնում իրանց աղաղակը և մերժում են Եւրոպական գիտութեան գրքերը, որոնք պարունակում են երկիւղալի և հաւատ կործանող մոլորութիւնները։ Ես կարծում եմ, որ եթէ արևելքը կարողանայ զսպել իւր ատելութիւնը և անցանել այն սահմանները, որոնց չկարողացաւ մինչև հիմի անցանել իմացական հայեցողութեան մէջ, Իսլամը ընդդիմանայ այժմեան մտաց յառաջադիմութիւններին։ Աստուածաբանական կենդրոնութեան պակասութիւնը միշտ թողել է Մոհամմեդական ազգերին յայտնի կրօնական աղատութիւն։ Ինչ ասում է թող ասի Ֆորստերը. ամիրապետութիւնը ոչ երբէք չէ նմանել պապութեան։ Ամիրապետութիւնը զօրաւոր էր միայն, երբ որ յառաջ էր բերում Իսլամի առաջին յաղթական կարծիքը։ Երբ որ ժամանակաւոր իշխանութիւնը անցաւ դէպի Էմիր—ալ օմրան և երբ այժմ ամիրապետութիւնը ոչինչ է, բայց եթէ կրօնական իշխանութիւնը. նա ընկնում է ամենաղէտալի ցածութեան մէջ։ Հոգեղէն իշխանութեան իդէայն չատնուրբ է արևելքի համար, նաև քրիստոնէութեան ամէն ճիւղերը վերահասու չեղեն նրան. Ցունա—Սլավոնական ճիւղը երբէք չհասկացաւ նրան։ Գերմանական ազգը մերժեց նրան, Լատինական ազգերը միայն զիջան և միայն դրին նրան։ Այդ փորձը ցոյց տուց, որ ժողովրդի պարզ հաւատը հերիք չէ կրօնը պահպանելու համար, թէ որ օրինաւոր քահանայապետութիւն և հոգևոր առաջնորդ չէ հսկում նրա վրայ։ Մինչ պակաս էր հաւատը Անգլո—Սաքսոնական ազգին, երբ որ Ը. Հենրիկոսի կամքը անցուցանում էր նրանց առանց իրանց կամքի, այսօր դէպի հերձուածը, էգուց դէպի հերետիկոսութիւնը։ Մոհամմէդական ուղղափառութիւնը պաշտպանուած լինելով հաստատուն և ինքնօրէն զօրքով, ինքն ըստ ինքեան զօրաժողով լինելով և վարուելով բաւական վիրաւորելի է։ Աւելորդ է յաւելացնել, որ եթէ միանգամ նորոգութեամբ չարժումը երևայ Իսլամի մէջ, Եւրոպան պիտի խառնուի միայն իւր ընդհանուր ներգործութեամբ. նա վատ չնորհակալութիւն կստանայ, թէ որ կամի ուղղել ուրիշների հաւատը։

1114